




ԵՐԱԿՐՈՆԵԱ

այսպէս

ՄԱՐԻ ԱՊՈՍՏՈՍԱՆԻ ԿՈՆՏԱԿՏԻ
ԿՈՆՏԱԿՏԻ, ԵՐԱԿՐՈՆԵԱ
ԼՐԱԿՈՒՄ ԵՐԱԿՐՈՆԵԱ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

24 հոկտեմբերի

Ֆրանսիայի Բուշ դյու Բոն նահանգի սենատորին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Բուշ դյու Բոն նահանգի սենատոր Ժան Նոել Գերինին:

տանքը հայտնեց տիար Ժան Նոել Գերինին՝ հայ մանուկների առողջության վերականգնմանն ուղղված ազնիվ ջանքերի համար:

Անդրադառնալով ապագա փոխա-



Ողջունելով սենատորին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Բուշ դյու Բոն նահանգի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեւ մեկ տասնամյակից ավելի պատմություն ունեցող բարեկամական ջերմ հարաբերություններին:

Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ 2003 թ. Ժան Նոել Գերինիի հովանավորությամբ Մայր Աթոռում հիմնադրված եւ Մարսելի «Բարձունք 5165» բարեգործական կազմակերպության ջանքերով գործող ատամնաբուժարանը շարունակում է իր օգտակար ծառայությունը բերել Էջմիածնի քաղաքի եւ շրջակայքի բնակչությանը: Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահա-

մագործակցությանը, ինչպես նաեւ Հայաստանում իրագործվելիք սոցիալական ծրագրերին՝ սենատորը հաստատեց, որ շարունակելու է անել ամենը, որպեսզի հայ մանուկները երբեք չհիվանդանան եւ ապրեն առավել առողջ ու անվտանգ:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն Աստծու օրհնությունն ու զորակցությունը հայցեց, որպեսզի տիար Գերինիի նվիրական բոլոր իղծերն ու բարի ցանկությունները կյանքի կոչվեն:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանը:

25 հոկտեմբերի

ԿԻՆԻ ՊԵՇՈՐԿԱՆ ՎԱՆՖԻ ՈՒՍԱՎՈՐՆԵՐԻՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Կինի Պեշորյան վանքի ուխտավորներին:

Ամենայն Հայոց Հայրապետը, իր գնահատանքի եւ օրհնության խոսքը բերելով հյուրերին, գոհունակություն հայտնեց, որ Ուկրաինայի Ուղղափառ Եկեղեցու բարեպաշտ զավակներն ուխտավորաբար այցելել են Հայաստան եւ համայն հայության հոգեւոր կենտրոն: Նորին Սրբությունը ներկայացրեց նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մոսկվայի Պատրիարքության միջեւ ձեւավորված եղբայրական հարաբերությունները եւ առկա սերտ գործակցությունը:

Վեհափառ Հայրապետն անդրադար-

ձավ Հայ Եկեղեցու կյանքում վանականության ունեցած մեծ դերակատարությանը, ներկայիս հոգեւոր կյանքին եւ Հայ Եկեղեցու հոգեխնամ ու ազգապահպան առաքելությանը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթք բարձրացրեց առ Աստված, որ Տիրոջ ողորմությամբ Ուկրաինայի ժողովուրդը հավատքով եւ աղոթական ոգով կարողանա դիմագրավել իր առջեւ ծառացած բոլոր դժվարությունները, եւ խաղաղության, սիրո ու եղբայրության ոգին մշտապես առաջնորդող լինի վերջինիս կյանքում:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ հայորդյաց տների 140 մանկավարժների հետ

Հոկտեմբերի 15-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում Ուսուցչի օրվա կապակցությամբ ընդունեց Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ հովանու ներքո գործող հայորդյաց տների 140 մանկավարժների՝ ուղեկցությամբ հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Կոմիտաս վրդ. Հովնանյանի:



Մանկավարժների անունից երախտագիտության խոսք ասաց հայր Կոմիտասը՝ նշելով, որ մանկավարժները մեկտեղվել են Սուրբ Էջմիածնում՝ ստանալու Ամենայն Հայոց Հայրապետի պատգամը, Նորին Սրբության օրհնությամբ առավել խանդավառվելու եւ զորանալու իրենց առաքելության մեջ:

Այնուհետեւ ներկաներին իր օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց հայր Կոմիտասին, ապա նաեւ հայորդյաց տների տնօրեններին ու մանկավարժներին՝ իրենց բերած նվիրյալ եւ ջանադիր ծառայության համար:

«Մենք մշտապես հետեւում ենք հայորդյաց տների աշխատանքներին եւ ուրախություն ենք ապրում այն հաջողություններով, որոնք արձանագրվում են հայորդյաց տների հարկից ներս», - ասաց Վեհափառը՝ իույս հայտնելով, որ ժամանակի ընթացքում հայորդյաց տներ կստեղծվեն նաեւ Հայաստանի խոշոր բնակավայրերում, որտեղ եկեղեցականների եւ ուսուցիչների նախան-

ծախնդիր աշխատանքների արդյունքում պատանի հայորդիները կգորացնեն իրենց շնորհներն ու ձիրքերը, կստանան հոգեւոր դաստիարակություն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ Մայր Աթոռի հայորդյաց տների համակարգն իր բնույթով տարբերվում է նմանատիպ հաստատություններից, որովհետեւ նրանց հարկի ներքո կառուցվում են ոչ միայն կրթությունը, տաղանդների եւ ձիրքերի բացահայտումն ու հղկումը, այլ, նախ եւ առաջ, բարոյական կերպարի ձեւավորումը: Վեհափառ Հայրապետը հավելեց, որ հայորդյաց տների մանկավարժների առաքելությունն է կերտել հայրենասեր ու հայրենանվեր անհատների, Եկեղեցու արժանավոր զավակների:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստծու Ս. Աջը հովանի եւ պահապան լինի մանկավարժներին, իսկ հայորդյաց տները շարունակեն իրենց վերելքի եւ ծաղկման ուղին:

Այսօր Երեւանի, Գյումրիի, Էջմիածնի, Վանաձորի, Աշտարակի թվով ութ հայորդյաց տուն հաճախում են շուրջ հինգ հազար մանուկ եւ պատանի:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մեծ Բրիտանիա

Հոկտեմբերի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն:

Հոկտեմբերի 28-ին Վեսթմինսթերյան աթոռությունում Վեհափառ Հայրապետը Լոնդոնի եպիսկոպոս Ռիչարդ Չարթերսի հետ հանդիսապետեց 1915 թ. Հայոց ցեղասպանության սուրբ նահատակներին նվիրված արարողությունը:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի Գեւորդյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ «ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ 100. ՀԱՆՁՆՈՒՄԻՅ ՀԱՏՈՒՅՈՒՄ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք 37 գիտությունների ազգային ակադեմիայի եւ Երեւանի պետական համալսարանի համատեղ նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված՝ «Հայոց ցեղասպանություն 100. Ճանաչումից հատուցում» միջազգային գիտաժողովի կազմակերպումը եւ հայրապետական Մեր օրինությունը հղում գիտաժողովի բոլոր մասնակիցներին:

1915 թվականը հազարամյակների մեր պատմության ամենաողբերգական էն է, որը հայրենագրկումի, մարդկային ու նյութական մեծ կորուստների անսամբելի ցավի դառը հիշողություններ է թողել մեր ժողովրդի հոգում: 20-րդ դարասկզբին ավելի քան մեկ ու կես միլիոն անմեղ հայորդիներ իրենց հավատի ու ազգային պատկանելության համար զոհ գնացին Օսմանյան կայսրության կողմից իրագործված անմարդկային ոճրագործությանը՝ Հայոց ցեղասպանությանը: Ավերվեցին մեր շենքերն ու բնակավայրերը, թալանվեցին ու քանդվեցին մեր վանքերն ու եկեղեցիները, ոչնչացվեց մեր հայրերի ստեղծած մշակութային ժառանգությունը:

Պատմական իր Հայրենիքի մեծագույն մասը կորցրած, մեծ դժվարությունների գնով իր կյանքը վերակառուցած մեր ժողովուրդը Տեղասպանության դաժան հետևանքները զգում է առ այսօր: Դրպես Տեղասպանություն վերապրած ժողովուրդ՝ մեր պայքարը, մեր ջանքերը նպատակաուղղված են ցեղասպանությունների ու բռնությունների դատապարտմանը, որպեսզի աշխարհում երբեք չվտանգվի ժողովուրդների ազատ եւ խաղաղ ապրելու աստվածաշնորհի իրավունքը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս իր պատգամն է հղել հոկտեմբերի 15-ին Երեւանում 37 գիտությունների ազգային ակադեմիայի եւ Երեւանի պետական համալսարանի համատեղ նախաձեռնությամբ մեկնարկած «Հայոց ցեղասպանություն 100. Ճանաչումից հատուցում» միջազգային գիտաժողովի կազմակերպիչներին եւ մասնակիցներին: Նորին Սրբության խոսքը գիտաժողովի բացմանը ներկայացրել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Արշակ Եսսս հաջատրյանը:



Տավալի է, որ մարդկության դեմ իրագործվող այսօրինակ հանցագործությունները տակավին տեղ ունեն մեր կյանքում: Այսօր միջազգային տարբեր հարթակներից մենք լսում ենք կոչեր ու հորդորներ խաղաղ ու ապահով աշխարհի կառուցման մասին, միևնույն աշխարհի տարբեր կողմերում, հատկապես Մեր ծավոր Արեւելքում, դաժանորեն խոշտանգվում ու սպանվում են հազարավոր մարդիկ, շատերն ստիպված լքում են իրենց բնակավայրերը, անխնա ոչնչացվում են պատմամշակութային հնադարյա արժեքները: Արդյո՞ք հնարավոր է խաղաղության կառուցումը՝ առանց արդարության, առանց նախնիներն կատարված հանցագործությունների դատապարտման ու հատուցման: Փաստերով վկայ-

ված իրողություն է, որ չդատապարտված հանցագործությունը ծնում է նոր՝ ավելի մեծ հանցագործություն: Որքա՞ն գոհեր խլեց ֆաշիզմը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, որի առաջնորդները քաջալերված էին Հայոց ցեղասպանության հանդեպ համընդհանուր սոցալցոլոգիայով: Որքա՞ն անմեղ մարդիկ են տառապում մեր օրերում ահաբեկչությունների պատճառով, որոնց կազմակերպիչները վստահ են իրենց անպատժելիության վրա:

Մեր ժողովուրդը, որ վշտակից է մերօրյա պատերազմներից ու բռնություններից տուժած ժողովուրդներին, անվազ նախանձախնդրությամբ պայքարելու է արդարության հաստատման համար, քանզի արդարության եւ համընդհանուր դատապարտման ճանապարհն է միայն, որ աշխարհը գերծ պիտի պահի նոր ցեղասպանություններից ու ոճրագործություններից:

«Հայոց ցեղասպանություն 100. Ճանաչումից հատուցում» միջազգային գիտաժողովը կարելի է անվանել «Երեւանի միջոցով բարձրաձայնելու եւ առավել հանրայնացնելու մարդկության դեմ իրագործված հանցագործությունների հիմնախնդիրները: Մենք վերստին Մեր գնահատանքն ու բարեմարտանքներն ենք հղում գիտաժողովի կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին՝ կարենալով ձեռնարկությունները ի նպատակ խաղաղ ու բարոյ աշխարհի կառուցման:

Առ նստված աղոթքով հաջողություններ ենք մաղթում գիտաժողովի աշխատանքներին եւ հայցում, որ Տերն Ամենակալ խաղաղություն ու բարոյություն պարգևի բոլոր ազգերին ու ժողովուրդներին:

ԳԵՂՈՐԳՅԱՆ ԻՈՂԵՆՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԵՆՈՒՆ ԱՅԵՆԵՐ ՄՈՍԿՎԱՅԻ ԻՈՂԵՆՈՐ ԱԿԱՂԵՄԻԱ

Հոկտեմբերի 14-ին, օրինությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գետրգյան Իողեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը Մոսկվայում ներկա գտնվեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի Իողեւոր ակադեմիայի հիմնադրման 330-ամյա տարեդարձին նվիրված տոնակատարությանը:



Հանդիսության ընթացքում հայր Գարեգին ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական գիրը, որով Նորին Սրբություն իր հայրապետական օրհնությունն ու գնահատանքն է հղել Իողեւոր հաստատության տեսչական ու դասախոսական կազմին, ինչպես նաեւ ուսանողությանը՝ հաստատության հիմնադրման օրվա ուրախակի առիթով:

«...Հոգեւոր-կրթական հաստատությունները մեծ գործունեություն են իրականացնում՝ տերուսականը առաքելության համար արժանի մշակներ պատրաստելու: Եկեղեցականաց նոր սերունդը Իողեւոր բարձրագույն ուսումնական հաստատությունների օրինակ հարկի ենթոյ, ամբարշտով փորձառություն եւ գիտելիքներ, լծվում է Աստծուն եւ հաւատարմոր ժողովրդին նվիրյալ ծառայության՝ աշխարհում տարածելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանի լույսը: Հոգեւոր-կրթական հաստատությունների գործունեությունը, հիմնովի, առավել արդյունազարդվում է քույր եկեղեցիների կրթական հաստատությունների համագործակցությամբ ու շահեկան փոխհարաբերություններով:

Տարիների ընթացքում մեր եկեղեցիների կրթական հաստատությունների գործակցությունը եւս մշտապես արգասավորվել է բարի արդյունքներով: Դրա

վառ ապացույցն է ուսանողների փոխանակման գործընթացը, որ սկզբնավորվել է դեռ տասնամյակներ առաջ: Մոսկվայի Իողեւոր ակադեմիայում իրենց ուսումնառությունն են շարունակել Հայ Առաքելական Եկեղեցու Իողեւորականներ, այդ թվում նաեւ Մենք, եւ այսօր ջերմությամբ ենք հիշում Ռուս Ուղղափառ Եկեղեցու այս կարեւոր Իողեւոր կրթօջախում Մեր ուսանողության տարիները: Գոհունակությամբ է Հայոց Հայրապետիս համար, որ այսօր էլ շարունակվում է փոխգործակցության այս բարի ավանդույթը՝ Մոսկվայի ակադեմիայից Գետրգյան Իողեւոր ճեմարան սաների եւ դասախոսների այցելությամբ եւ թե՛ ձեր ակադեմիայում մեր եկեղեցականաց ստացած աստվածաբանական կրթությամբ»,- ի մասնավորի ասված է Վեհափառ Հայրապետի ուղերձում:

Այցի ընթացքում Գարեգին վարդապետը հանդիպումներ ունեցավ Իողեւոր ակադեմիայի ղեկավար Եվգենի արք. Վերեսկու եւ կրթական ու կարգապահական գծերով պրոռեկտորների հետ, քննարկեց երկու կրթօջախների համագործակցության առաջիկա ծրագրերը:

Գեղորգյան ճեմարանի տեսչին ուղեկցում էին Մոսկվայի Իողեւոր ակադեմիայում իր Իողեւոր ուսումնառությունը շարունակող Մայր Աթոռի միաբան Մինաս արք. Հախվերդյանը եւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի Իողեւոր սպասավոր Ներսես քնն. Խանսկյանը:

ՕԾՎԵՐ ԵՎԵՂԻԱՅԻ ՍԵ ՄԱՐԻԱՄ ԱՍՈՎԱԾԱԾԻՆ ԽԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հոկտեմբերի 24-ին, օրինությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովհան Եսսս Հակոբյանը Եվեղիայի Սողերթեղի բաղադրում հանդիսատեսեց Ս. Մարիամ Աստվածածին Եկեղեցու օծման արարողությունը:

Եկեղեցու վերակառուցումը, որն իրականացվել է համայնքի հավատացյալների հանգանակությամբ եւ բարերար հայորդիների նվիրատվությամբ, սկսվել էր 2014 թվականից:

Արարողությանը մասնակցում էին Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տիրան վրդ. Պետրոսյանը, սկանդինավիա-հայոց Իողեւոր Իովիլ Եղիշե վրդ. Ավետիսյանը, Սողերթեղի հայ համայնքի Իողեւոր Իովիլ Նորայր քնն. Գանջումյանը եւ Դանիայի ու Նորվեգիայի Իողեւոր Իովիլ Ստեփանոս քնն. Հովհաննիսյանը:

«Հրաշափառ» շարականի երգեցողության ներքո լուսարարապետ սրբազանը, օրհնելով հավատացյալներին, եկեղեցական թափուրով մուտք գործեց եկեղեցի, ուր սկսվեց եկեղեցու օծման կարգը:

Շարականների եւ սաղմոսների երգեցողությունից, աղոթքների ընթերցումից հետո խորան բարձրացվեց սրբալույս Մյուռնը, որով Հովհան Եսսսկու պաշտոնը եկեղեցու Ս. Սողանի եւ եկեղեցու սյուների օծումը:

Այնուհետեւ վերակառուցված եկեղեցին կոչվեց Ս. Մարիամ Աստվածածին անունով:

Արարողության ավարտին Հովհան Եսսս Հակոբյանը



եւ Տիրան վրդ. Պետրոսյանը Սողերթեղի վերանորոգված եկեղեցու օծման առիթով շնորհավորեցին հավատավոր հայորդիներին:

Արարողությանը ներկա էին նաեւ Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Եվեղիայում 37 արտակարգ եւ լիազոր դեսպան Արտակ Ապիտոնյանը, Եվեղիայի Թագավորության ռիկտագի (խորհրդարանի) փոխխոսնակ Իզաբել Դինգիսյանը, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, համայնքի անդամներ եւ ուխտավորներ:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱԶ. ԲՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ թիվ 19

Սիրած քնարական հերոսուհուն, աստվածային, անթերի գեղեցկության կրողին միջավայրից առանձնացնում է բանաստեղծի դիտող ու գանազանող, նկատող ու գնահատող աչքը: Եթե հնարավոր լիներ թուր դարերի գովերգված ու փառաբանված գեղեցկուհիներին դնելու կողք կողքի, անմիջապես կծագեր պարզ համեմատության ու ճաշակների տարբերության բնական խնդիր: Բացի այն, որ թուր դարերի գեղեցկուհիներն էլ գնահատելի են իրենց ժամանակի մեջ՝ որպես այս կամ այն գրողի ճաշակի արտահայտություն, որ փոխանցվել է սերունդներին, դարձյալ բնականորեն, կարող է ծագել մի ամբողջ անպատասխան հարցաշար. իրոք գովերգված անձնավորություններն այնպիսի գեղեցկուհիներ են եղել, ինչպես նրանց ներկայացրել են բանաստեղծները, թե՞ միայն բանաստեղծի անհատական ճաշակի արտահայտությունն են, կամ՝ ի՞նչ են գտել նրանց մեջ, ախր նրանց ի՞նչն է գեղեցիկ...

Եվ այդ պարագայում հնարավոր է, որ ժամանակներ առաջ արդեն իսկ աստվածացված, գովերգված ու փառաբանված, թուրի համար ընդունելի գեղեցկուհիներն իշեն իրենց բարձունքներից, նրանք կարող են խամրել ու նսեմանալ, կա՛մ էլ ժամանակների հեռվից, փոխված ճաշակների պայմաններում էլ մեղմ ու տկար թվան նրանց հասցեին շռայլված բանաստեղծական շենշող գովեստները:

Սիրած աղջկան՝ Շուշանիկ Մատակյանին ուղղված Ավ. Իսահակյանի հուզումնառատ նամակները, նրա հանդեպ տաճած սիրո բուռն զացմունքներն արտահայտող բանաստեղծությունները՝ «Իմ հոգին տարագիր մի թռչուն», «Զեզ չտեսել ուխտել էի», «Այսօր ձեր տուն մեծ խնջույք կա», «Տարիներ հետո քեզ տեսա նորից», «Սիրեցի, յարս տարան», «Դարդս լացեք»,

«Ասում են, թե դու այնպես», «Մի մրաիտ աղջիկ տեսա» եւ այլն, կարդալիս ականա մտածում ես՝ տեսնես այս աղջիկը կամ աղջիկները ի՞նչ գեղեցկուհիներ են եղել, ի՞նչ անհասանելի ու անմատչելի հրաշալիք է եղել Շուշանիկ Մատակյանը, որ արժանացել է Իսահակյանի նման հզոր քնարերգուի սիրուն ու նվիրվածությանը, եւ դեռ վերջինս էլ նրան դարձրել է քնարական հերոսուհի եւ հավերժացրել, պարգապես անմահացրել է իր սիրերգության մեջ. ափսո՛ս, որ ես չեմ տեսել նրան ու նրանց, եւ հազա՛ր երանի տեսողներին:

Հովհ. Շիրազի մի օր հարցրի.

- Գյումրիում երբեք տեսած կա՞ք Իսահակյանի սիրած աղջկան՝ Շուշանիկ Մատակյանին. ինչպիսի՞ն էր նա, իրոք այնպիսի գեղեցկուհի էր, որ պատանության տարիներին իր սիրո ցույցերով ու սեփեթեթանքներով Իսահակյանին կարողացել է պարգեւել այդքան խոր հիացմունք, հարուստ ու բազմերանգ զգացմունքներ եւ իր մերժումով ու այսօր ամենեւին չհիշվող ում Շովիանես Միրաջյանի հետ ամուսնանալով՝ ամբողջ կյանքում բանաստեղծին պատճառել է սիրո անամոք վիշտ ու կսկիծ, անասելի տառապանքներ:

Հետեւեց առհասարակ կնոջ Էուբյունը լավ ճանաչող, կանանցից դառնացած, բայց, այնուամենայնիվ, նրանց սիրող բանաստեղծի անմիջական ու անկեղծ պատասխանը.

- Ես մեր Շուշանիկին կտեսնի՞ս. Էսոր պես մի անպետք բան էլ եւ էր:

Տարակուսեցի, բայց մտածեցի՝ ուրեմն անարդար չէր նրբագույն քնարերգու Վահան Տերյանը՝ գրելով.

Ես գիտեմ հիմա: Ամենքի նման
Մի սովորական աղջիկ էիր դու. -
Ե՛ս էի պճնել փայլով դյուխական
Գորշ պատկերը քո կյանքի եւ հոգու:

Բայց անկեղծ լինեց. թեեւ այժմ անհնար է ասել, թե բանաստեղծն իր սիրած աղջիկներից ո՛ւմ է նկատի ունեցել խորագույն հիասթափություն արտահայտող այս տողերը գրելիս, բայց այն ժամանակներում, երբ Տերյանն ինքը սիրում էր այդ «ամենքի նման սովորական աղջկան» եւ դեռ չէր բացահայտել նրա «կյանքի եւ հոգու գորշ պատկերը», նույն Տերյանի համար նա՛ էր աշխարհում ամենից գեղեցիկը, անբաղդատելին ու անփոխարինելին:

Հավանաբար իրենց միջավայրում ու ժամանակին այդպես են եղել նաեւ Զուհակի «խոշ յարը», Նաղաշ Հովնաթանի «գալումը», Սայաթ-Նովայի «դիփունեն բաշ» սիրեկան յարը, Պեշիկթաշյանի եւ «Սկյուտարի սոխակ» Դուրյանի եւ թաղրյալ Պիստոսը, պայմանական Նեւ, «վերջալուսի աղջիկ» թրքուհին կամ շոգենավում պատահած գեղանի հայուհին, Մեծարենցի «երազներու պերճուհին» կամ Օֆելյան, Ռ. Սեւակի եւ Մ. Չարիֆյանի «պզտիկ աղջիկը», Ե. Չարենցի «կապույտ աղջիկը» եւ թուր մյուսները, ում բանաստեղծները սիրել են, գեղեցկացրել ու հարստացրել հավելյալ արժանիքներով, հավերժացրել իրենց տաղանդի ուժով՝ իրենց սիրո բովանդակությունը ներդնելով նրանց մեջ:

Վկա՛ նույն Տերյանի «Ես իմ սերն եմ սիրում» բանաձեւը:

Նույնն է եւ Հովհ. Շիրազի պարագան՝ մանկապատանեկան ժամանակավոր ու անցողիկ հրապուրանքներից, Գյումրիի փողոցներում, դարձում, տեքստիլ գործարանում կամ Երեւանի պետական համալսարանում եւ այլուր «կյանքի ճամփին մի ակնթարթ» պատահած աղջիկներից, երիտասարդական բուռն տեսլանքներից ու հավերժ թվացող պոթյունային սերե-



րից սկսած՝ մինչեւ հասուն տարիքի խոր ու ճակատագրական սերեր՝ սպասման երջանկության ու վայելքի, դրժման ցավի ու ողբերգության փոխնիփոխ ելեւէջումներով:

Իսկ Հովհ. Շիրազի սիրո քնարերգությունը, որքան էլ անձնական ու սուբյեկտիվ, չենք կարող համարել միայն այս կամ այն կնոջ նկատմամբ տաճած սուկ անձնական զգացմունքների արտահայտություն, թեեւ դրանք իրականում հենց ա՛յդ կանանց, նրանց գեղեցկության ու քնքշության, հավատարմության ու նվիրվածության, լայն առումով՝ մարդու մարդկայնորեն գեղեցիկ լինելու հանդեպ բանաստեղծական վերաբերմունքի դրսևորումներ են: Սակայն անհերքելիորեն կարող ենք պնդել, որ նրա կյանքում եղած կանանցից ամեն մեկը մի էական գույն, մի կարեւոր կրթական կամ գիծ ու շարիք է ավելացրել նրա սիրո առասպելի բազմերանգ ու բարդ հյուսվածքին:

Շարունակությունը՝ էջ 4



ԽՐԻՃՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԶԱՆԵՐԵՐԸ ԽԱՅ-ՔՐՈՂԱԿԱՆ ՀԱՃԱԳՈՐԾԱԿԳՈՒԹՅՈՒՆՈՂՈՒԹՅԱՆԸ

րի շրջանում առաջ էր բերում մոլի հակահայկական տրամադրություններ: Առհասարակ՝ սուլթան Համիդը կայսրության ժողովուրդներին իրար դեմ հանելու, գրգռելու մեծ վարպետ էր, եւ երբ 1912 թ. գահընկեց եղած վերադառնում էր Կ. Պոլիս, նա-վի վրա, չթաքցնելով իր դժգոհությունը բալկանյան պատերազմից եւ երիտթուրքերի գործելակերպից, բացականչել է. «Երիտասարդ թուրքեր ինչպես արգելք չեղան եւ թոյլ տուին, որ Հոյն եւ Պուկար իրարու հետ բարեկամանան» (Գ. Եազըճեան, Ապտիլ Համիտ Բ. կարմիր սուլթանը, Պէյրուս, 1980 թ., էջ 395): Օսմանյան կայսրության թեեւ հպատակ, սակայն պոտենցիալ ապստամբ երկու ժողովուրդներին՝ հայերին ու քրդերին, միմյանց դեմ դուրս բերելով՝ սուլթանը դրանով իսկ մեկ կրակոցով երկու նպատակակետ էր խոցում: Հիրավի, քրդական վայրագություններն ուղղելով հայության դեմ, սուլթանական կառավարությունը ջլատում եւ թուլացնում է կայսրությանը թշնամի երկու հակառակորդների ուժերը եւ հաճույքով ականատես լինում իր իսկ արհեստականորեն սարքած կոնֆլիկտի հանգուցալուծմանը, որը եւ տեղի ունեցավ 1915 թ.՝ հայոց Մեծ եղեռնով:

Սուլթանը թուրքական 4-րդ բանակի հրամանատար, չերքեզ Չեքի փաշային հանձնարարեց ստեղծել իր այնքան փայ-փայած «համիդիե» գորագույնը: Ճշմարիտ է այն դիտարկումը, որ այդ գնդերը, ըստ Էուբյան, կազմակերպվեցին ներքին թշնամիների, այսինքն՝ քրիստոնյաների կամ ավելի ստույգ՝ հայերի դեմ: Քրդերին գիկվորական կազմակերպված ձեռով հայության դեմ տրամադրելու առաքելու-

թյամբ 1879 թ. Վան ուղեւորվեց սուլթանի բարձրաստիճան մի պաշտոնյա՝ Բեքիր Սամի քեյը, որի առջեւ խնդիր էր դրված. «հայոց ազգութիւնը ճնշելու... մի նոր հնարագետ, արտաքուստ չը երեւացող եւ արագ գործադրելի նախագիծ մշակելու եւ իսկույն գործի դնելու» (Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Ա, Փարիզ, էջ 117):

Քրդական ցեղախմբերի զինված ոտնձգությունները Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգների հայկական բնակավայրերի նկատմամբ 19-րդ դարավերջին ընդունեցին սիստեմատիկ ու համատարած բնույթ՝ ձեռք բերելով ամօրյա ու ամենօրյա կենցաղային երեսույթի նշանակություն: Արեւմտահայությունն ամբողջովին մատնված էր քրդական թափառող ցեղերի ու ավազակախմբերի քմահաճույքին եւ կամայականությանը: Այդ ձեռով էր սուլթանի կառավարությունը վճռել «...ամբողջ երկիրը-Տաճկահայաստանը աներակ դարձնել, ամայացնել» («Դրօշակ», թիւ 12, 1895 թ.):

Ժամանակի հայ ազգային-քաղաքական գործիչներից շատերը, գնահատելով ու մեծ կարեւորություն տալով Օսմանյան կայսրության տարածքում ճնշված ու հեծեծող մյուս ժողովուրդների հետ համերաշխվելու խնդրին, ձգտում էին քայլեր կատարել ստեղծելու թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ-ասորական եւ հայ-քրդական դաշնակցությունը:

Հայ հասարակական-քաղաքական մտքի երեւելի ներկայացուցիչներ Մ. Խրիմյանը, Բաֆֆին, Գր. Արծրունին, Տեւկանցը, Ա. Թոխմախյանը, Մ. Փորթուկալյանը սուր հնչեղությամբ հանրային ասպարեզ բարձրացրին սույն հիմնահարցը: Դրա համար,

անշուշտ, կային նաեւ որոշակի օբյեկտիվ նախադրյալներ:

Ուշագրավ է, որ դեռեւս 1890-ական թթ. սկզբին Խրիմյան Հայրիկը կազմել էր բարենորոգումների մի ծրագիր, որում հատկապես պայմաններ էր առաջադրում դարմանելու հայ-քրդական հակամարտությունը:

Խրիմյանի նախառնած ծրագրով նախատեսվում էր իրագործել հետեւյալը.

ա. «Նախ եւ առաջ քիւրտերը իրենց անորոշ եւ անսահման դրութենէն հանելով՝ յատուկ եւ սեփական հող եւ երկիր որոշել իրենց բնակութեան համար:

բ. ...Դաշտային եւ լեռնային կեանքէն հանել զիրենց եւ տեղափոխել քաղաքներու մէջ. Վանա սահմանէն ի Կարին բերել, Կարնոյ եւ Մշոյ սահմանէն ի Վան տանել» (Յ. Սիրունի, Պոլիս եւ իր դերը, Գ հատոր, 1987 թ., Անթիլիաս, էջ 494):

Միաժամանակ Մ. Խրիմյանը, քաջատեղյակ լինելով Արեւմտահայաստանում քրդերի բնակության եւ տեղաշարժերի հիմնական գոտիներին ու երթուղիներին, առաջարկում է. «...Զիւրտեր բնակութեանց տեղերը յարմար դիրքերու վրայ մի քանի փոքր գորանոցներ հաստատել» (Յ. Սիրունի, էջ 494):

Հետաքրքրական է, որ Խրիմյանը հերքում է թուրքական իշխանությունների այն պնդումը, թե պետական գործությամբ քրդերի դրությունը բարեկարգելու փորձերը կստիպեն քրդական ցեղերին գաղթելու երկրից՝ այն համարելով սուկ ենթադրություն, քանզի քրդերն «այնչափ հիմարացած չեն, որ ընդարձակ, ջրավետ եւ խոտավոր երկիր լքեն»:

Շարունակությունը՝ էջ 5

Սկիզբը՝ թիվ 18-19

Հանգը խոսքակառուցող կարեւոր դեր ունի հայերեններում, բայց առանձնապես ճոխ հնչեղություն ունի: Համեմատաբար ավելի նշանակալի է Նաղաշ Հովնաթանի տաղերի հանգաբանությունը, հարստանում է ձայնային հնչեղությունը, բանաստեղծական տարբեր ձեւեր բերում են իրենց հանգաբանությունը:

Մինչ Սայաթ-Նովան հանգը կատարելության էր հասել Պաղտասար Դպիրի եւ Պետրոս Դափանցու ստեղծագործություններում՝ նրբագեղություն, հարստություն, ճոխություն, տարատեսակ կրկնաբերումների առատություն, արձագանք հանգ («Այ իմ գովելի, լի՛ր, լի՛ր // Գովելի ես, գովելի, // գովելի, լի՛ր, գովելի, լի՛ր...») եւ այլն: Ահա Պաղտասար Դպիրի բանաստեղծություններից մեկը, որն ամբողջությամբ հնչյունների վերածված բառերի երգ է.

*Միրահար, սիրահար, սիրահար սիրովդ
եղեալ եմ, եղեալ եմ,
Հըրահար, հըրահար, հըրահար հըրովդ
եղեալ եմ, եղեալ եմ:*


*Թե՛ բոլոր, թե՛ բոլոր, թե՛ բոլոր բարիքն
ինձ ոգին, ինձ ոգին,
Յագումնիկ, յագումնիկ, յագումնիկ
չըտան ինձ նոքին, ինձ նոքին:*

*Բայց ի քեն, բայց ի քեն, բայց ի քեն զի՛նչ
այլ բարի, այլ բարի,
Իրաւամբ, իրաւամբ, իրաւամբ հոգւոյն
յարմարի, յարմարի:*

*Ապա յոյժ, ապա յոյժ, ապա յոյժ կարի
յիրաւի, յիրաւի,
Հոգի իմ, հոգի իմ սիրովդ ծարաւի,
ծարաւի:*

*Թե՛ յամեն, թե՛ յամեն, թե՛ յամեն՝ վայելս
արօտիմ, արօտիմ,
Կարօտիմ, կարօտիմ, տէ՛ր իմ, տէ՛ր իմ
տեսնող կարօտիմ, կարօտիմ:*
Վերջին տան մեջ առկա է նաեւ քիչ հանդիպող հանգավորում՝ տողավերջի եւ տողասկզբի հանգային կապ՝ *արօտիմ - կարօտիմ*:

Իսկ Պետրոս Դափանցին հասնում է ոչ միայն ճոխ հանգաբանության, այլեւ ստեղծում բազմաթիվ բարդ հանգեր, երբ հանգավորվում են ոչ թե սոսկ մի քանի հնչյուններ, այլ առանձին բառեր: Միայն Դափանցին ավելի շատ բարդ հանգեր է ստեղծել,



քան մյուս բոլոր հանգաբանները միասին վերցրած՝ Սայաթ-Նովայից մինչեւ Սահյան ու Սեւակ: Օրինակ՝ *ախտային - ախտային, ուրախարար - ուր ախտարար, արդարաբան - արդարաբան, աշխարհին - աշխարհին, ի համբերել - ի համբերել, ահագուցանե - ահա ցուցանե*: Դափանցին օգտագործում է եւ վերջնահանգ, եւ ներքին հանգ, ստեղծում է հանգային, հնչյունական տարատեսակ կապակցումներ եւ դառնում հանգի վարպետ:

Հատկապես մոլիսամազը պետք է փոխանցվեր Սայաթ-Նովային եւ գագելի հետ մեկտեղ ի հայտ բերեր ճոխ ու շքեղ հանգաբանություն, այն հարստացներ կրկնաբերումներով ու կրկնեղանգներով: Աշուղական պոեզիայի ամբողջ ճոխությունն ու շքեղությունն առկա է Սայաթ-Նովայի խաղերում: Նա խոսքի, բառի հնչեղության ու հանգաբանության կախարդ է: Մի տեղ գրում է. «Խաղ կանչիք հանգով»: Ներքին հանգի (անդամների, կիսատողերի), վերջնահանգի մի կատարյալ նմուշ է «Քանի վուր ջանիմ...» խաղը.

*Քանի վուր ջան իմ / յա՛ր, քի դուրբա՛ն
իմ / արա ի՛նչ անիմ՝
Արտասուք անիմ, / շատ հոքուց հանիմ,-
/ յա՛ր, դարձեալ տանիմ:
Ասիր. «Ջեյրան իմ». / թող քի սեյր անիմ.
/ յա՛ր, մըտիկ անիմ:*

*Մո՛ւտ բախչեն նազով, / քիզ գովիմ
սազով, / յա՛ր իլթիմազով:*

Եվ այսպես՝ մնացած տները: Սայաթ-Նովան ոչ միայն հարուստ, այլեւ բարդ հանգի վարպետ է՝ *դասե դաս - դասեղաս, թաքավուր - թաքավուր - թաքավուր, քարապուր - քարապուր - քարապուր, յա՛ր-ա՛ր, յա՛ր - յարա յա՛ր, յար - յա՛ր, սայադ - սայադ - սա - յադ*: Այդպիսի հանգերով լեցուն է «Յիս կանչում եմ լալանին» խաղը: Հարուստ ու ճոխ հանգերին ավելանում են հնչյունական կուտակումները, կրկնաբերումներն ու կրկնեղանգները:

Շնորհալու պարզունակ հանգաբանությունից մինչեւ Պաղտասար Դպիր, Պետրոս Դափանցի եւ Սայաթ-Նովա հայ քնարերգության մեջ հանգի ձեւավորման, հատկացման, զարգացման եւ կատարելագործման ճանապարհն է: Սա մի ամբողջ պատմական ճանապարհ է՝ արժանի առավել հանգամանակի ուսումնասիրության, ինչին թռուցիկ անդրադարձել ենք նաեւ այլ առիթներով (տե՛ս Դ. Գասպարյան, Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը, Ե., 1979, նույնի՝ Հայ ինն եւ միջնադարյան գրականության պատմություն, Ե., 2009):

Հետագա շրջանում հանգն իր փառավոր տեղը գրավեց ինչպես Մխիթարյան բանաստեղծների (Վանանդեցի, Բագրատունի, Հյուսիսյան, Ալիշան) քերթված-

ներում, այնպես եւ արեւելահայ (Ալամդարյան, Թադիսյան, Աբովյան, Նալբանդյան, Պատկանյան, Շահազիզ, Աղայան, Բաֆֆի, Հովհաննիսյան, Ծատուրյան, Թումանյան, Խաչատրյան, Տերյան, Չարենց, Վստունի, Լ. Չարյան, Մահարի, Սարյան, Ծիրազ, Սահյան, Սեւակ եւ ուրիշներ) եւ արեւմտահայ ու սփյուռքահայ (Պեշկեպաշյան, Դուրյան, Չոպանյան, Ա. Հարությունյան, Որբերյան, Շանթ, Վարուժան, Ռ. Սեւակ, Սեծարենց, Թեքեյան, Կ. Չարյան, Վահյան, Մուշեղ Իշխան, Չարիֆյան) քնարերգության մեջ: Յարճանյանին չի՞շատակեցինք, որովհետեւ ազատաչափը հանգավոր չի լինում:

Այս երկար ճանապարհին արտահայտվել են տարբեր կարծիքներ, վիճարկվել կամ հաստատվել է հանգի անհրաժեշտությունը:

Դեռեւս «Սարուռների» կապակցությամբ Ներսես Անդրիկյանին Գենտից հղած 1906 թ. մարտի 7-9 թվակիր նամակում Վարուժանը գրում էր. «*Ինձի կը գրեք, թե եթե իմ գրություններես հանգերը վտարեմ, անոնք ավելի պիտի ընդարձակին եւ գեղեցկանան. այդ մասին Ձեզ համախոհ եմ եւ ոչ թե, վասնզի անոնք մտածումը կը շղթայեն՝ այլ նույնիսկ կը քայքայեն մեր շեշտերուն գեղեցկությունը*: Հանգը միջին դարերն է, եւ ինչ որ միջին դարերն է ընդհանրապես՝ բռնապետական է, եւ ինչ որ բռնապետական է՝ հետադիմական, եւ չէ՛ մի որ հանգը արվեստին բռնավորն է եւ անոր հոգին կազմող մտածման հետմղիչը:

Միջին դարերն ասոյն ամեն հաջորդական նոր սերունդ արդեն կամաց-կամաց սկսած է գահեն թագը խլել, խղճեն՝ բանադրանքը եւ քերթվածեն՝ հանգը:

Եվ հարկ է, որ ես հոս խոստովանիմ, թե որչափ որ շեշտին գեղեցկությամբ գինովեցած եմ, այնքան հանգին հմայքը չեմ զգացած (բացի մեր չափերու տասնորդին մեջ): Ահա՛, ատոր համար է, որ եթե ոտանավորներու մեջ չեմ աշխատած աղքատ հանգ ունենալ, չեմ ալ փափաքել երբեք անոնց հարստությունը:

Եվ հիմա արդեն ես հանգի մոլեռանդությունը նետած եմ վրայես, բացի քանի մը թեթեւ ոտանավորներու մեջ, ուր անոր ներկայությունը մասամբ մը հարկ է բուն եռանդի ըմբոստությունը ջլատելու եւ լեզուն իր նյութին մեղմությանը հասցնելու համար» (ԵԼԺ, Ե., 1987, հ. III, 270-271):

Շարունակությունը՝ էջ 6

ՀՈՎՀԱՆՆԵՆ ԵՐԱՅ. ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 3

Բոլոր դեպքերում, որքան էլ մարդու համար «երկնային պարգեւ» սիրո զգացմունքը, այնուամենայնիվ, միայն երեակայության կամ գրքային ազդեցությունների արդյունք չէ: Այն անակնկալ, առաջին հայացքից կամ տեսական ծանոթության ընթացքում ծնվում է որոշակի երկրային եակի նկատմամբ, եւ բանաստեղծի վառ պատկերացումներով, պատկերավորման յուրահատուկ միջոցներով հարստացված ու համալրված այդ եակն էլ դառնում է հեղինակի մուսան, աստվածացվում նրա կողմից, դառնում նրա մշտաբորբոք ներշնչարանը: Հենց դա էլ բանաստեղծին մղում է կամ իր սիրած եակի արտաքին ու ներքին բարեմասնությունների, լայն առումով՝ գեղեցկության անսանձ գովերգի ու փառաբանության, կամ իր իսկ «ստեղծած», աստվածացրած ու գովերգած գեղեցկուհու նվիրումի կամ դրժման, պատճառած հուզումնալից հոգեվիճակների, հույսերի եւ հուսախաբությունների, տենչանքների ու տանջանքների, կարոտի ու սպասման եւ ամենատարբեր այլ իրադրությունների գեղարվեստական ճշմարտացի պատկերման:



*Կարոտներս լամ ու
թեթեւանամ,
ինչպես ամպերը անձրեւից
հետո:
Համբույրի կարոտ վարդերս
բանամ,
ինչպես մայիսը անձրեւից
հետո:
Բացված վարդերով հեռու
գիրկդ գամ,
ինչպես արեւը անձրեւից
հետո:*

(Ծիրազ Հ., Երկեր, հ. 3, «Սովետական գրող» հրատ., Եր., 1984,

էջ 28): Այսուհետեւ սույն հրատարակությունից մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ:

Հովհ. Ծիրազի կյանքում էլ, անգամ մանկության ու պատանության տարիներից, եղել են բազմաթիվ աղջիկներ ու կանայք: Բոլորին այսօր հիշելն անհնար է, բայց անհերքելի իրողություն է այն, որ ոմանցով ինքն է կախարդված կամ հրապուրված եղել, սիրահարվել՝ ժամանակավորապես կամ «հա-

վիտյան», եւ շա՛տ-շատերը սիրահարված են եղել հենց իրեն՝ բանաստեղծին:

Մարդու եւ մանավանդ բանաստեղծի համար դժվար են եղել բազմաթիվ հրապուրանքների, ճշմարիտ ու խաբուսիկ սերերի մեջ կողմնորոշումն ու այլընտրանքը, որ դրսևորվել են «Այսքան չքնաղ աղջիկներից մի՞թե մեկը իմ բախտը չէ», «Մոլորվել եմ ինչպես մի գառ՝ սեւ ու կապույտ աչքերի մեջ» եւ բազմաթիվ այլ բանաստեղծություններում:

Հայ բանաստեղծն էլ Պուշկինի պես ունեցել է ի՛ր Աննա Զեմլե, որին տեսիլի պես պատահաբար հանդիպել է մի անմոռաց ու «հրաշալի անկթարթ»։ Այսօր պարզապես անհնար է ճշտել, թե իրականում ո՛վ է եղել փողոցով անցնող այն գեղեցկուհին, որի հետ բանաստեղծի պատահական ու ակնթարթային հանդիպումն ալեկոծել է նրա ներաշխարհը, վերաբերվածել բանաստեղծի խաբված սիրո մի ամբողջ ողբերգություն: Աղջկա կրծքին ամրացված ճչացող բացված վարդի եւ բանաստեղծի ճեղքված, բայց արժանապատվությամբ հեզնաբար ծիծաղող սրտի համեմատությունը

հենց այդ ողբերգությունն է ակնարկում.

*Վարդը կրծքիդ դու անցար՝
Աչքս մնաց քո կրծքին:
Ախ այն վարդը բոցավառ
խաբված սիրտս էր քո կրծքին,
Ճեղքված սիրտս, որ դարձյալ
Ծիծաղո՛ւմ էր քո կրծքին...*

Սիրո երգերում եւ նամակներում հիշվում են հայտնի եւ անհայտ, այսօր մեզ ոչինչ չատող անուններ, Տերյանը կասեր՝ «Սին անուններ կորած կանանց - ուրիշ ոչինչ», ովքեր իրենց նկատելի կամ աննկատ հետքն են թողել բանաստեղծի քնարերգության մեջ: Բայց հայ եւ համաշխարհային սիրերգությանը քաջատեղյակ բանաստեղծը ի՛ր սերն է երգել, իր սիրո փիլիսոփայությունն է ձեւավորել տարբեր կանանց նվիրած բանաստեղծություններում: Եվ դրանք, թեպետ որոշակի անձնավորությունների նվիրված, երբեմն էլ անուններով կամ ընծայականներով ամրագրված՝ վեր են անձնականությունից եւ առհասարակ սիրո զգացմունքը մարմնավորող գեղարվեստական ընդհանրացումներ են:

Շարունակելի
Սամվել ՄՈՒՐՎԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր



որիդային Միության կազմալուծումով փլուզվեց ոչ միայն մի ողջ հասարակարգ, այլև այն բոլոր դրական իրողությունները, որոնք ստեղծվել էին խորհրդային ժողովրդի կողմից տասնամյակների համառ ու հետեւողական աշխատանքի արդյունքում: Այդ աշխատանքի արգասիքն էր նաեւ խորհրդային կրթական համակարգը, որը շատերի, ընդ որում՝ արեւմտյան երկրների կարծիքով, աշխարհի լավագույն կրթական համակարգերից էր: Խորհրդային Միության յոթանասունամյա գոյության ընթացքում վերացվեց, ստեղծվեցին հազարավոր դպրոցներ եւ հարյուրավոր բուհեր, որոնք դաստիարակել եւ կրթել էին միլիոնավոր մարդկանց: Այդ մարդկանց առավել մի մասը դարձան ակնավոր մասնագետներ իրենց բնագավառներում, համաշխարհային մասշտաբի գիտնականներ եւ մշակույթի գործիչներ: Ասվածից թող չստեղծվի այն կարծիքը, թե սովետական կրթական համակարգը կատարյալ էր եւ գուրդ որեւէ թերությունից: Ինչպես ցանկացած պետության կրթական համակարգ, այնպես էլ Խորհրդային Միությանը, էր կարող գերել լինել առանձին բացթողումներից եւ թերություններից: Բայց եւ այնպես, երբ համեմատում ենք խորհրդային դպրոցները եւ բարձրագույն ուսումնական հաստատություններն այսօրվա կրթօջախների հետ, ակամայից համոզվում ենք, որ այստեղ համեմատության որեւէ եզր գոյություն չունի: Մեր երկրում այժմ գործում են բազմաթիվ կրթօջախներ՝ թե՛ պետական, թե՛ մասնավոր, սակայն դրանցից շատ քչերն են ազնվորեն կատարում իրենց առաքելությունը, այն է՝ կրթել ու դաստիարակել պարկեշտ, ազնիվ եւ խոր գիտելիքներով զինված երիտասարդների, որոնք ի գործ կլինեն ողջ կանգնացնելու մեր երկիրը, նպաստելու դրա զարգացմանն ու առաջընթացին:

Թվում է, թե մենք ապրում ենք կատարելապես ազատ ժամանակաշրջանում, որը պետք է ավելի մեծ հնարավորություններ ընձեռնէր կատարելագործելու եւ բարեփոխելու մեր ողջ կրթական համակարգը՝ այն համապատասխանեցնելով կրթության միջազգային չափորոշիչներին: Անկախության օրոք փոխվեցին բազմաթիվ կրթական ծրագրեր, դասագրքեր, մանկավարժական հին մոտեցումները փոխարինվեցին նորերով, ստեղծվեցին գիտելիքի գնահատման նոր չափորոշիչներ, սակայն, որքան էլ զարմանալի թվա, կրթության մակարդակը ոչ միայն չի բարձրանում, այլև գնալով ավելի է իջնում: Հարց է առաջանում, թե ինչու: Եթե վերլուծենք մեր կողմից քննարկվող խնդիրը, ապա կհամոզվենք, որ դրա պատճառները բազմաթիվ են: Նախ նշենք, որ Հայաստանի կրթական համակարգի փլուզումը սկիզբ է առել ոչ թե անկախության հռչակումից ի վեր, այլ սկսած 1988 թ. արցախյան շարժումից: Հենց այս ժամանակ էր, որ սկսվեցին տեական դասադրույթները, որոնք էին կարող չխաթարել բնականոն ուսումնական գործընթացը: Այնուհետեւ սկսվեցին Հայաստանի շրջափաման եւ արցախյան պատերազմի դաժան տարիները, որոնք նույնպես իրենց սեւ կնիքը դրեցին մեր դպրոցների ու բուհերի վրա: Պատերազմական թուրքիստի մեջ գտնվող մեր պետությունը պարզապես ի գործ էր լիովին ֆինանսավորելու հարազատ կրթօջախները: Պետության ֆինանսական անկարողության արդյունքում ստեղծվեց համալսարանների եւ ինստիտուտների վճարովի ուսուցման համակարգը, առանց որի շատ կրթական հաստատություններ, ըստ երեւույթի, կդադարեին գոյություն ունենալ: Այսպիսով՝ վճարովի համակարգը փրկեց մեր բուհերի գոյությունը, բայց ոչ ուսման մակարդակը: Ոմանք, թերեւս, կհարցնեն. ի՞նչ մեթոդի բան կա վճարովի կրթական համակարգի մեջ: Չէ՛ որ կրթություն տալը նույնպես հասարակությանը մատուցվող ծառայություն է եւ մյուս ծառայությունների պես կարող է լինել նաեւ վճարովի: Եթե մեր երկրում կան մասնավոր սուպեր-մարկետներ, հյուրանոցներ, ռեստորաններ, սրճարաններ եւ համանման այլ օբյեկտներ, որոնք վճարովի են եւ բավականին որակյալ ծառայություններ են մատուցում, ապա ինչու՞ կրթությունը չի կարող լինել վճարովի ու միեւնոյն ժամանակ՝ արդյունավետ կրթական մակարդակի: Ինչու, Խորհրդային Միության Նախկին հանրապետությունների, մասնավորապես Հայաստանի օրինակն ակնհայտաբար ցույց տվեց, որ վճարովի եւ մասնավոր կրթական համակարգն առնվազն մեր տարածաշրջանում բնավ միշտ չէ, որ իրեն արդարացնում է: Ասվածը ոմանք կարող է զարմանք պատճառել. ինչպես հայտնի է, զարգացած կապիտալիստական երկրներում լավագույն կրթօջախները հիմնականում մասնավորներն են: Ուսուցումն այդ բուհերում եւ համալսարաններում իրականացվում է վճարովի հիմունքներով, ընդ որում՝ շատ բարձր վարձավճարներով, եւ վերջիններիս դիմաց երաշխավորում են բարձրակարգ կրթություն, որը համապատասխանում է արդի կրթության միջազգային չափորոշիչներին: Սակայն եթե գաղտնիքը վճարովի համակարգի մեջ է, ապա Հայաստանի բոլոր մասնավոր բուհերը պետք է որ ավելի որակյալ կրթություն տալու համարվեն, քան պետական կրթօջախները, սակայն իրականում դա բնավ էլ այդպես չէ: Ինչու, սա ամենեւին չի նշանակում, թե մեր երկրի պետական բուհերը միանգամայն համապատասխանում են որակի միջազգային չափանիշներին: Բնավ՝ ոչ: Սրա գլխավոր պատճառներից մեկը, հավանաբար, արդի հայ հասարակության մտածելակերպի մեջ է. երիտասարդը հաճախ բուհ է գնում ոչ թե այն պատճառով, որ ինքն ունի բավարար ընդունակություններ եւ նվիրում տվյալ մասնագիտությանը, այլ գուտ ձեռնակն մղում ենք: Մենք՝ հայերս, հաճախ ենք հպարտորեն բարձրաձայնում, թե մենք ուսումնասիրենք ազգ ենք, եւ մեր բոլոր երեխաները տաղանդավոր են եւ ուսման ծառայ, սակայն սա լոկ չափազանցություն է: Համաձայն գենետիկայի օրենքների՝ ընդունակ եւ տաղանդավոր երեխաների թիվը չի կարող գերազանցել որոշակի տոկոսը: Մարդկանց ճնշող մեծամասնությունը, որպես կանոն, օժտված է միջակ կամ ցածր ընդունակություններով, եւ սա միանգամայն բնական է ու օրինաչափ: Այս օրինաչափությունը, ի դեպ, բնորոշ է ցանկացած երկրի խմբի: Այսպիսով՝ մենք կարող ենք եզրակացնել, որ մեր երկրում կրթության որակը ցածր է, քանի որ մեր բարձրագույն ուսումնական հաստատությունների զգալի մասը չի կատարում ուսանողների եւ ինչու ոչ՝ դասախոսական անձնակազմի պատշաճ ընտրություն: Իրականում բարձրակարգ կրթություն ապահովելու համար նախ եւ առաջ անհ-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԿՈՒՄԸ ՀԵՏՈՒՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



րաժեշտ է կատարել անձնակազմի բժախնդիր ընտրություն: Ուսումնական ծրագրերի, ձեռնարկների ու դասագրքերի կատարելագործումը, լաբորատորիաների վերազինումը եւ գրադարանների պատշաճ համալրումը թեեւ կարեւոր են, սակայն ամենեւին բավարար չեն որակյալ կրթության երաշխավորման համար: Որպիսի կրթությունը լինի բարձրակ, հարկ է պահպանել մի շարք պահանջներ. նախ եւ առաջ կրթությունը չի կարելի է վերածել բիզնեսի, որովհետեւ կյանքը վկայում է, որ բիզնեսն ու կրթությունը, որպես կանոն, անհամատեղելի են: Պատահական չէ, որ Մեծ Բրիտանիայում բուհերի գերակշռող մասը պետական են եւ ապահովում են միջազգային մակարդակի կրթություն: ԱՄՆ-ում նույնպես պետական բուհերի թիվը փոքր չէ, սակայն այստեղ գործում են մի շարք մասնավոր համալսարաններ, որոնք շատ բարձր վարկանիշ ունեն ոչ միայն Ամերիկայի, այլև աշխարհի մասշտաբով: Այսինքն՝ ԱՄՆ-ը, ի տարբերություն շատ այլ երկրների, կարողացել է համատեղել բիզնեսը բարձրակարգ կրթության հետ:

Սակայն «բիզնես» բառին այստեղ հարկ է մի փոքր վերապահումով մոտենալ: Բանն այն է, որ ամերիկյան կրթական համակարգում գործում է մի կարեւոր սկզբունք. ոչ մի տաղանդավոր երիտասարդ չի կարող զրկվել լավ կրթություն ստանալու հնարավորությունից, եթե նույնիսկ նա չունի հնարավորություն վճարելու տվյալ համալսարանի կամ քոլեջի կողմից սահմանված ուսման վճարը, որը, ի դեպ, բավականին պատկառելի գումար է կազմում, իսկ մեր պատկերացմամբ՝ այդ վարձավճարները պարզապես աստղաբաշխական են: Ուսման վարձավճարներն ԱՄՆ-ում տատանվում են տարեկան 10 000-50 000 դոլարի սահմաններում՝ կախված տվյալ համալսարանի վարկանիշից եւ ֆակուլտետից: Այժմ հարց է առաջանում. եթե դիմորդն օժտված է, սակայն ֆինանսապես անկարող, ապա ո՞վ է վճարում այդ վիթխարի գումարները: Արեւմուտքում՝ մասնավորապես ԱՄՆ-ում, այս խնդրի լուծումը վաղուց գտնվել է. գոյություն ունեն մի շարք կրթական ֆոնդեր, որոնք ֆինանսավորում են շնորհալի ուսանողների կրթության ողջ ծախսը: Այդ օգնությունը կա՛մ անհատույց է, կա՛մ էլ տրամադրվում է երկարաժամկետ անտոկոս վարկի տեսքով:

Ճարտնակությունը՝ էջ 6



Սփիքը՝ էջ 3

Խրիմյանն առաջարկում է, որ Բ. Ռուբինյանը եւ ընտրի արդարակրթով, անխաբ ու կարողաճեռն կառավարություն

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՋԱՆԵՐԸ ՀԱՅ-ԵՐՈՂԱԿԱՆ ՀԱՃԱԳՈՐԾԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՈՒԹՅԱՆԸ

Վանի կուսակալության համար, քանի որ Վանի գավառը խիստ ընդարձակ է, եւ քրդերի մի զգալի մասը վերոնշյալ տարածքում է արմատավորված:

Խրիմյանը խորապես գիտակցում էր, որ քրդերին սանձահարելն ու կարգուկանոնի կոչելը Կ. Պոլսի կենտրոնական կառավարության համար ամենեւին էլ անհնարին գործ չէ՝ անհրաժեշտ կամքի եւ ցանկության դեպքում: Այդ են վկայում այդ ժամանակաշրջանի եւ հետագայի բազմաթիվ փաստերն ու վկայակոչումները: Նույնիսկ օտարերկրյա դեսպաններն ու հյուպատոսներն իրենց զեկուցագրերում եւ հուշագրություններում աներկբա հաստատում են նույն իրողությունը:

Այսպես՝ Վանում ռուսաց հյուպատոս Վ. Մաեսկին եւս, ի թիվս այլոց, հավելյալ անգամ հավաստում է, որ 1896 թ. հունիսյան դեպքերի ժամանակ բաշխեցվեցին իրավիքը Վան՝ մասնակցելու հայերի ջարդերին ու թալանին:

Այս ամենը սպառնիչ կերպով հաստատում են այն իրողությունը, որ թերեւս կողք կողքի ապրող հայ եւ քուրդ ժողովուրդները կարող էին իրենց ներհակություններն ու տարաձայնությունները կարգավորել եւ փոխադարձ համաձայնություն գալ, եթե թուրքական կառավարությունը «...միջամուխ չըլլար, հայ մշակ եւ արիեստատոր ժողովուրդին դեմ քիւրտ ցե-

ղերը չգրգռեր, հարստահարություններու չմղեր» («Պայքար», Բոստոն, թիվ 278, 1950 թ.):

Այսպիսով, հակառակ Մ. Խրիմյանի սույն ծրագրի, օսմանյան իշխանությունները հետամուտ եղան մշտապես բոլորքն ու արյունալից լարվածության մեջ պահելու հայ-քրդական հարաբերությունները:

Հետագայում նույնպես Խրիմյան Հայրիկի եւ հայ ազգային գործիչների ուշադրության առանցքում արդիական մնաց հայ-քրդական կնճիռի կարգավորման եւ սուլթանական ռեժիմի դեմ համատեղ ուժերով հանդես գալու խնդիրը:

Արմեն ԿԱՐԱԴԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Սկզբը՝ էջ 4

Այս դատողությունները խոսում են 22-ամյա բանաստեղծի որոշակի սկզբունքների ու կողմնորոշման մասին: Նամակի շարունակության մեջ ես անում է լրացուցիչ դիտարկումներ, որոնք ես հետաքրքրական եմ այլ բառախոսքում: «Յետո, չեմ գիտեր, թե «Սարսուռներում» մեջ ո՞ր աստիճան կատարյալ կամ անկատար է տաղաչափությունը, ես եթե այն արդյոք բոլորովին անխնամ է, թե կան մեջն անխնամ տողեր, բայց ես այսչափը պիտի ըսեմ, թե այդ անճշտի առերեսությամբ արվեստին ավելի աշխատեմ եմ, քան թե գաղափարներով խոզարկումիս մեջ: Ինչո՞ւ. վասնզի նախ՝ ուզած եմ հպատակեցնել ամեն տող առողջամտության կանոններուն, որ ինք իր մեջ արդեն կը պարունակե՞ր ճշմարիտ գեղեցկություն մը, քան ինչ զգացումներ տողերը չափողը, քան թե օրենքը, ուր միայն կատարել հաջողած եմ: Երկրորդ՝ ուզած եմ քիչ թե շատ շեշտ դնել ինձ, <Ձեր> ըսածով ամեն կանոնով դնել <2 անընթաց> մտածումս՝ առանց այն մկրատելու» (ԵԼԺ, III, 271):

Վարուժանը «Արմենուհի» պոեմը նախապես գրել է անհանգ, քանի որ, ըստ նրա, հանգը միջնադարից է, եւ ինչ միջնադարյան է՝ «բռնապետական» է, որովհետեւ կաշկանդում է մտքի ազատ թռիչքը: Այդ կապակցությամբ Չոպանյանին գրում է. «Որչա՞ր անհամբեր եմ, երբ ազատ ժամանակ մը ունենաք, տեսնել «Արմենուհի»-ին Ձեր մատնանշած թերությունները: Ձեր դիտողություններն ստեպ օգտված եմ: Այսօր միայն երազս է դեպի «կատարելության» դիմել» (16. I, 1908, Գեներ): Չոպանյանը պատասխանում է. «Արմենուհի»-ն, ինչպես ըսի, շատ լավ շարադրված է եւ սքանչելի է իր ամբողջությամբ մեջ, բայց կան թերություններ եւ տաղաչափական պակասներ (աններդաշնակ տողեր), անճիշտ բացատրություններ (*impropiété des formes*), արձակուրդային բառեր, դարձվածքներ եւ այլն. հետո, այսպիսի *poème*-ները համաչափ *strophe*-ներում բաժնված 11 ոտքով, լավագույն է, որ հանգավոր ըլլան» (Գ. Վարուժան, Նամակների, Ե., 1965, էջ 261):



Ահա Չոպանյանի խորհրդով Վարուժանը վիպերգը դարձնում է հանգավոր եւ այդ կապակցությամբ 1908 թ. մարտի 22-ին Գեներին նրան գրում. «Արմենուհի»-ն սրբագրած եմ եւ հանգավոր ըրած եմ. եւ որովհետեւ անգամ մը գրված էր անհանգ՝ այդ բավական դժվար եկավ ինձ. բայց այդպես իրավացի շատ սիրուն եղավ կամ ավելի՞ լավ՝ քան առանց հանգի...» (Գ. Վարուժան, ԵԼԺ, III, 1987, էջ 369: «Իրավացի» բառը «Նամակների»-ում՝ «իրավցե» է):

Հանգի մասին տարբեր ակնարկներ ունի Չարենցը: Իր բանաստեղծությունների ռուսերեն թարգմանիչ Ալեքսանդր Գատովին 1934 թ. հունիսի 7-ին այդ կապակցությամբ գրել է. «... ռուսացիներում ամենազգալիորեն (ծեի տեսակետից), այն է,

ՀԱՄԱԳԲ

որ հանգերը, հատկապես չորրորդ, եզրափակիչ տողում, առանձնապես դիպուկ հնչեն, հակառակ դեպքում հանգը կորցնում է կրկնաթերթի մեջ եւ դրանով իսկ քառատողից ստացվում է թերավարտ, աղոտ տպավորություն:

<...> Ինչ վերաբերում է «Հաշնակներին» եւ «Հանդիպմանը», ապա, անկեղծ ասած, դրանք ինձ դուր չեկան, թերեւս միայն այն պատճառով, որ թարգմանված են առանց հանգերի... Բանաստեղծություններն ինքնին պետք է գրեթե հանճարեղ լինեն, որպեսզի հնչեն առանց հանգի, արդյոք այդ չի՞ պատճառը, որ շատ քերին է հաջողվում սպիտակ ոտանավորը: Բոլորիս հանճարեղ սպիտակ ոտանավորներից բացի, ես ռուսական պոեզիայում ոչ մի այնպիսի բան չգիտեմ, որ իմ վրա խոր տպավորություն թողներ, նույնիսկ պատերազմային սպիտակ ոտանավորները մի տեսակ չեն զամբում հիշողությանը մեջ, չեն ընկալվում որպես բանաստեղծություններ: Էլ ո՞ր մեք, հասարակ մահկանացուներս, այն էլ այսպիսի ազդեցություն-փրկում բովանդակությամբ խցկվեցե՞ք մի այդպիսի ասպարեզ... Յետեւաբար, եթե Ձեզ չի հաջողվի դրանք խցկել հանգավոր յամբի մեջ, գրողի ծոցը նետեք...» (ԵԺ, Ե., VI, 436-437, 440-441):

Չարենցը տաղաչափության վարպետ էր՝ թե՛ որպես բանաստեղծ, թե՛ որպես տեսաբան: Միայն Չարենցը տաղաչափական ավելի շատ ձեւեր է օգտագործել, քան բոլոր հայ բանաստեղծները միասին վերցրած: Դա վերաբերում է եւ չափին, եւ հանգին՝ իր տարատեսակներով, եւ տալիս, եւ ընդհանուր հնչյունաբանությանը: Այդ մասին առիթ ունեցել եմ գրելու (տե՛ս Գ. Գասպարյան, Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը, 1979, էջ 7-248: Նույնի՞ Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, 1996, Ե., էջ 420-438):

Ավելացնեմ, որ Չարենցը իմաստուն տեսաբան էր նաեւ: Վկայությունը Ավետիք Բահաթյանի «Հին հայոց տաղաչափա-

կան արվեստը» (1891) գրքի կապակցությամբ արած նրա գրառումն է (տե՛ս Ե. Չարենց, Անտիպ եւ չհավաքված երկեր, 1983, Ե., էջ 476-477):

Չարենցն արտակարգ բազմազանության հասցրեց հանգը թե՛ հնչյունապես, թե՛ տողերի մեջ ունեցած դասավորությանը եւ թե՛ ըստ շեշտադրության՝ որպես արական կամ իգական հանգ: Հատկապես մեծ է Չարենցի դերը մոտավոր առձայնության հանգի կիրարկման գործում: «Խմբապետ Շավարշը», «Պատմության քառուղիներով», «Դեպի լյառ Մասիս», «Չարահայատ «Վարդան գորավար» պոեմներում, չափածո նովելներում եւ էլի մի շարք գործերում նա հասավ չափածո խոսքի արտակարգ բնականության, որ ձեռք բերվեց տողաչափերի թեթեւ եւ ազատ տատանումներով եւ հանգի ներկաբացակայությամբ: Ոչ չափն է կանոնիկ ու կաշկանդող, ոչ հնչյունաբանությունը: Խոսքն ազատ է ու հոսանուտ, տարբերը՝ հորդող ու բնական, խոսքը չափածո է ու բանաստեղծական, բայց եւ չափածո, եւ բանաստեղծականը հասցված են նվազագույնի: Այսպիսով Չարենցը շարունակեց մի թանկ ավանդույթ եւ բացեց բանաստեղծական մտածողության, չափածո արվեստի մի նոր ճանապարհ:

Թանկ ավանդույթ ասվածը վերաբերում է Շեքսպիրի ստեղծագործությունների Հոլիանդեր Կան-Մասեյանի կատարած հայերեն թարգմանություններին («Համլետ», «Օթելլո», «Մակբեթ», «Լիր արքա») տաղաչափական առանձնահատկություններին, այսինքն՝ խաղացված հանգ ու չափին: Կան-Մասեյանը կատարել էր տաղաչափական գյուտ: Այդ մասին երբեք չի խոսվել: Չարենցը ծանոթ էր այդ թարգմանություններին, իսկ 1930-ականներին խմբագրում էր նրա թարգմանած «Լիր արքան», այսինքն՝ մոտիկից գիտեր գաղտնիքն եւ նոր կյանք պարգեցեց տաղաչափական այդ հիմքով թանկարժեք ու շատ հեռանկարային հայտնագործությանը:

Չարենցի
Դավիթ ԳԱՄԴԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Ն. ԲԵՐԴՅԱՆԵՎ

ՊԱՐԱԴՈՔՍԱԼ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՔԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Ստեղծագործության բնույթի մասին

Սկզբը՝ թիվ 18-19


Իսկ ի՞նչ նշանակություն ունի ստեղծագործությունը բարոյագիտության մեջ: Այդ նշանակությունը երկակի է: Առաջին հերթին բարոյագիտությունը պետք է հարց բարձրացնի ուզածը ստեղծագործության նշանակության մասին, եթե նույնիսկ այդ ստեղծագործությունն ուղղակիորեն չի առնչվում բարոյական կյանքի հետ: Ճանաչողական ստեղծագործությունը կամ գեղարվեստական ստեղծագործությունը ունի բարոյական նշանակություն, քանզի այն ամենը, ինչը ստեղծում է բարձր արժեքներ, ունի բարոյական նշանակություն: Եվ երկրորդ՝ բարոյագիտությունը պետք է հարց դնի բարոյական գործույթի ստեղծագործական նշանակության մասին: Ինքնին բարոյական կյանքը, բարոյական գեղատեսականներն ու գործերը ստեղծագործական բնույթ են կրում: Օրենքի բարոյագիտությունը եւ նորմերը դեռեւս չեն հասկանում բարոյական գործույթի ստեղծագործական բնույթը, եւ դրա համար էլ անխուսափելի է անցումը ստեղծագործական բարոյագիտությանը, ճշմարիտ կոչումի բարոյագիտությանը եւ մարդու նշանակությանը: Ստեղծագործությունը, ստեղծագործական վերաբերմունքը համայն կյանքի հանդեպ ոչ թե մարդու իրավունքն է, այլ՝ մարդու պարտքն ու պարտականությունը: Ստեղծագործական լարվածությունը բարոյական իմպերատիվ է՝ եւ այն էլ կյանքի բոլոր ոլորտներում: Ճանաչողական եւ գեղարվեստական գործույթներում ստեղծագործական լարվածությունն ունի բարոյական արժեք: Ճշմարտության եւ գեղեցիկի իրականացումը հենց բարոյական շնորհ է: Սակայն ստեղծագործական բարոյագիտության մեջ կարող է բացահայտվել մշակութային կատարյալ արժեքի ստեղծագործության եւ մարդկային կատարյալ անձի ստեղծագործության միջեւ նոր բախում:

Չարենցի
Դավիթ ԳԱՄԴԱՐՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԿՈՒՄԸ ՀԵՏՈՒՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սկզբը՝ էջ 5

Յավոք, մեր երկրում կրթության ֆինանսավորման այս ձեւը բնավ միշտ չէ, որ գործում է, ուստի եւ հայկական բարձրագույն կրթությանը բավական հաճախ սովորում են ոչ թե նրանք, ովքեր տաղանդավոր են եւ ունեն նվիրում տվյալ մասնագիտության նկատմամբ, այլ նրանք, ովքեր ի վիճակի են վճարելու ուսման վարձավճարը: Յավախ է, բայց մեր պետությունը չունի բավարար միջոցներ բարձրակարգ բարձրագույն կրթությունը հովանավորելու համար: Միջոցներ, անշուշտ, տրամադրվում են այսպես կոչված պետական պատվերի համար, սակայն դրանք բավարար չեն երաշխավորելու այնպիսի կրթության մակարդակ, որն առկա է Հարավարդի, Փրինսթոնի, Կոլումբիայի, Սորբոնի, Օքսֆորդի, Ջեմբրիջի եւ Նմանատիպ այլ համալսարաններում: Այժմ մի պարզ տրամաբանական հարց է առաջանում. մի՞թե մեր բուհերի ցածր որակը հիմնականում պայմանավորված է ցածր ֆինանսավորմամբ: Այս հարցին անհնար է միանշանակ պատասխանել: Մի կողմից՝ եթե բուհն ունի լուրջ ֆինանսավորում, ապա այն հնարավորություն ունի վճարելու բարձր աշխատավարձեր, այսպիսով համալրելու իր պրոֆեսորադասախոսական անձնակազմը լավագույն կադրերով, պարբերաբար վերագինելու գիտակրթական լաբորատորիաները, ժամանակին համալրելու գրադարաններն արդի դա-



սագրքերով եւ ձեռնարկներով, ավելի հաճախակի կազմակերպելու գաղափարական գիտաժողովներ եւ վերջապես ժամանակին ձեռքագաղտնելու այն ուսանողներից, ովքեր պատշաճ կերպով չեն կատարում իրենց ուսանողական պարտավորությունները: Բացի այդ՝ ցանկացած բուհ եւ վերջինիս մեջ ներգրավված պրոֆեսորադասախոսական անձնակազմը պետք է ունենան ներքին պատասխանատվության զգացում. այսինքն՝ ուսանողներին գեղատեսիլ՝ հիմնվելով մասնագիտական խղճի, արդարության եւ օբյեկտիվության սկզբունքների վրա: Անհրաժեշտ է բացառել կամ առնվազն նվազագույնի հասցնել ուսանողների գեղատեսիլ եւ ավարտական վկայագրերի շնորհումը «խնամի, ծանոթ, բարեկամ»

սկզբունքով: Նույն բանը կարելի է ասել կոռուպցիոն երեւույթների մասին: Վերջիններս նույնպես լրջորեն խաբիւյում են կրթության որակը: Այս խնդիրն ունի երեք լուծում. նախ եւ առաջ մանկավարժը պետք է լինի ֆինանսապես բավականաչափ ապահովված, որպեսզի չարժի գարտուղի ճանապարհներով հավելյալ դրամ վաստակելու գաղափարները: Սակայն վարձիերին բարձր վարձատրություն երաշխավորելուց հետո հարկ է նաեւ խստացնել պատասխանատվությունը կոռուպցիոն չարաշահումների համար, եւ վերջապես երրորդը՝ հասարակությունը պետք աստիճանաբար հետ սովորի կաշառք առաջարկելու արատավոր սովորությունից: Սակայն սրա համար անհրաժեշտ է բարձրացնել հասարակության գիտակցական մակարդակը, ինչը, ի դեպ, ոչ թե մի քանի տարվա, այլ առնվազն մի քանի տասնամյակի հետեւողական աշխատանքի արդյունք է: Միայն սույն հոդվածում մատնանշված բոլոր պայմաններն ու պահանջները կատարելու դեպքում է, որ հնարավոր կդառնա վերածնել հայոց կրթության ինչ ու բարի ավանդույթները, իսկ գուցե եւ հասնել բարձրագույն կրթության միջազգային մակարդակին: Իսկ մինչ այդ մենք կունենանք այն կրթության որակը, ինչ ունենք այժմ:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ.
թեկնածու

Սկիզբը՝ թիվ 8-9, 16, 19

Մի իշխանավորի մասին, որ արդարություն է գթասրտություն պահպանելու համար հրամայեց իր մի աջը հանել եւ իր որդու մյուս աջը

Վալերի Մաքսիմը 2. գրքում պատմում է, թե Կալենցիոսն՝ մի երկրի կառավարիչը, որոշեց աչքից զրկել նրան, ով ուրիշի կնոջ հետ մեղք կգործի։ Բիշ ժամանակ անցավ, եւ այդ բանում զանցանք գործեց նրա որդին։ Ամբողջ ժողովուրդը նրան խնդրում էր ներում շնորհել։ Եվ խորհրդածելով այն մասին, թե որքան օգտակար են բարին ու ողորմածությունը, նաեւ՝ որ արդարությունը չպիտի ոտնահարվի, իր համաքաղաքացիների՝ ներման կոչերից ստիպված՝ կարողացավ պահպանել թե՛ այն, թե՛ մյուսը, այսինքն՝ արդարությունն ու ողորմածությունը։ Գործը քննեց եւ վճռեց, որ հանեն որդու մի աջը եւ իր՝ մյուսը։

Սբ Պավլին եպիսկոպոսի գթասրտության մասին


Երանելի Պավլին եպիսկոպոսն այնքան գթասիրտ էր, որ մի աղքատ կնոջ՝ բանտում գտնվող իր որդուն օգնելու խնդրանքին պատասխանեց. «Քեզ միայն կարող եմ օգնել այսպես. ինձ տոբ բանտ, ուր քո որդին է»։ Կինը նրան բանտ տարավ, եւ նա հանձնվեց բանտապահների ձեռքը եւ ասաց. «Այս բարի կնոջ որդուն արձակեցե՛ք եւ նրա փոխարեն պահեցե՛ք ինձ»։

[Մեծ ողորմության մասին, որ հանուն Աստծու բաժանեց մի լուսնայափոխ]

Լուսնայափոխ Պիեռոն շատ հարուստ մարդ էր եւ այնքան գթասիրտ եղավ, որ հանուն Աստծո նախ իր ամբողջ ունեցվածքը բաժանեց աղքատներին, հետո, երբ բաժանել-սպառել էր, հորդորեց վաճառել նաեւ իրեն եւ ամբողջ հասույթը տալ աղքատներին։

Թե ինչպես Տերը պատժեց Կառլոս Մեծի նախարարին

Սարակինոսների դեմ արշավանքի ժամանակ Կառլոս Մեծը մոտ էր մահվան։ Նա կտակ կազմեց։ Այլ բաների հետ՝ իր ձին ու հանդերձանքը կտակեց աղքատներին։ Եվ նախարարներից մեկին հանձնարարեց դրանք վաճառելով՝ դրամի հասույթը բաժանել աղքատներին։ Սա անտեսեց եւ ամբողջը պահեց իրեն։ Կառլոսը տեսնելով հայտնվեց նրան եւ ասաց. «Դու ինձ ութ տանջանք պատճառեցիր՝ կրելու քավարանում, Աստծու կամոք, քո յուրացրած ձիու եւ հանդերձանքի



քի պատճառով։ Բայց փառք իմ Աստծուն՝ ես մեղքերս քավելով կգնամ երկինք, իսկ դու դրա համար կվճարես դառնություն»։ Երկնային ահեղ ծայն հնչեց եւ այն լսող բոլոր մարդու աչքի առաջ նրան դժոխք տարավ։

Երիտասարդ կայսեր առատաձեռնության եւ մեծահոգության մասին

Պատմում են երիտասարդ կայսեր բարության մասին, որը Բելտրամի դել Բորնիոյի խորհրդով պայքարում էր իր հոր դեմ։ Այդ Բելտրամին իրեն համարում էր ամենից խելացի։ Այդ մասին շատ ավանդություններ են շրջում, որոնցից մի քանիսը գրառել ենք այստեղ։ Բելտրամին նրա հետ որոշեց, որ նա իր հորից պահանջի գանձերի մի մասը։ Եվ որդին այնպես խնդրեց, որ ուզածին հասավ։ Ստացածը նա բաժանեց արժանավոր մարդկանց եւ աղքատ ասպետներին։ Ի վերջո իրեն բան չմնաց, որ դարձյալ նվիրաբերեր։ Մի ձեռնածու խնդրեց, որ իրեն որեւէ բան տա։ Նա պատասխանեց, թե ամբողջը բաժանել է. «Ընդամենն ինձ մնացածը բերանիս փչացած աւտամ է, բայց հայրս առաջարկեց երկու հազար մարկ տալ նրան, ով կարող է համոզել, որ ատամս հանեմ։ Գնա հորս մոտ եւ ասա, որ այդ դրամը քեզ տան, իսկ ես քո խնդրանքով ատամս կհանեմ»։

Ձեռնածուն գնաց եւ ստացավ դրամը, իսկ որդին ատամը հանեց։

Ուրիշ անգամ նա մի արժանավոր մարդու տվեց տասը մարկ։ Սենեշալը, այլ կերպ ասած՝ գանձապահը, վերցրեց այդ փողերը, գորգ փռեց սրահում, դրամը թափեց հատակին, իսկ տակը դրեց փաթաթած գորգը, որպեսզի կույտը ավելի մեծ երեւա։ Երբ երիտասարդ կայսրն անցնում էր սրահով, գանձապահը նրան ասաց. «Նայեցե՛ք, մեսսեր, դուք ինչքան եք տալիս։ Տեսնո՞ւմ եք՝ ինչ է նշանակում երկու հարյուր մարկ, իսկ դուք բնավ չեք գնահատում»։ Երիտասարդը նայեց ու ասաց. «Այսքան աննշան՝ այդպիսի արժանավոր մարդուն։ Նրան տուր չորս հարյուր։ Ես կարծում եմ՝ երկու հարյուր մարկն ավելի շատ է, քան տեսնում եմ»։

Անգլիական կայսեր առատաձեռնության ու մեծահոգության մասին

Անգլիական երիտասարդ կայսրն անընդհատ բաժանում էր ու նվիրում։ Մի անգամ աղքատ մի ասպետի աչքն ընկել էր արծաթե գավաթի կափարիչին, եւ նա մտածել էր. «Եթե ինձ հաջողվեր դա թաքցնել, ինձ ու ընկերոջս կբավեր շատ օրեր»։

Եվ արծաթե կափարիչը թաքցրեց հագուստի տակ։

Երբ սկսեցին սեղանները հավաքել, գանձապետն ստուգում էր արծաթեղենը եւ պարզեց կուրուստը։ Աղմուկ եղավ, եւ սկսեցին ելքի մոտ ստուգել ասպետներին։

Երիտասարդ կայսրը նկատել էր նրան, որ վերցրել էր կափարիչը։ Անկատ մոտեցավ նրան եւ ցածրաձայն ասաց. «Դա դիր իմ շորերի տակ, ինձ չեն ստուգի»։ Եվ ամբողջ կարմրատակած ասպետը վարվեց այդպես։ Երիտասարդ կայսրը դրսում նրան վերադարձրեց կափարիչը՝ խորթով հագուստի տակ, իսկ հետո կանչեց եւ հրամայեց նրան տալ գավաթի մնացած մասը։

Բայց նա ավելի մեծահոգի եղավ, երբ մի անգամ գիշերը աղքատ ասպետները թափանցեցին նրա սենյակը՝ երեւի մտածելով, թե նա քնած է։ Սկսեցին դարսել իրեր ու հանդերձանք՝ տանելու համար։ Նրանց մեջ կար մեկը, որ չէր ուզում թողնել բարձրարժեք վերմակը. որով ծածկվել էր կայսրը։ Նա բռնեց վերմակը եւ սկսեց քաշել կայսեր վրայից։

Կայսրը, որպեսզի չխլեն վերմակը, բռնել էր մի ծայրից այն ժամանակ, երբ ասպետը քաշում էր՝ քանի գործն արագացնելու համար մյուս ասպետները եւս չէին կանչել վերմակից։

Այնժամ երիտասարդ կայսրն ասաց. «Քանի որ ուժ եք գործադրում, դա արդեն կողոպուտ է եւ ոչ գողոն»։ Այս խոսքերը լսելով՝ ասպետները, որ կարծում էին, թե կայսրը քնած է, փախուստի դիմեցին։

Մի անգամ կայսրը՝ երիտասարդ կայսեր հայրը, որդու դեմ շատ զայրացավ եւ հարցրեց. «Ո՞րն է քո հարստությունը»։

Նա պատասխանեց. «Մեսսեր, իմը ձերից շատ է»։

Որոշեցին պարզել՝ այդպես է թե ոչ։ Օր նշանակեցին, որ ամեն մեկը պիտի ցուցադրեր իր գանձերը։ Երիտասարդ կայսրը հրավիրեց երկրի բոլոր ասպետներին, որ նշված օրը լինեն այնտեղ։

Իսկ հայրը հրամայեց հատուկ այդ օրվան կառուցել տաղավար եւ այդտեղ տանել ոսկի ու արծաթ՝ ձուլյ եւ փսեսների, գավաթների, զենուզարդի տեսքով, նաեւ՝ թանկագին քարերի անտակ բազմություն, եւ այդ ամենը փռելով գորգերի վրա՝ որդուն ասաց. «Իսկ ո՞րն են քո գանձերը»։

Այնժամ որդին սուսերը հանեց պատյանից։ Եվ հավաքված ասպետները նրա մոտ շտապեցին փողոցներով ու հրապարակներով։ Թվաց՝ ամբողջ երկիրը լի է ասպետներով։ Ծեր կայսրը ոչինչ անել չէր կարող։ Եվ ոսկին հայտնվեց երիտասարդ կայսեր տրամադրության տակ, որն ա-

սաց ասպետներին. «Վերցրե՛ք ձեր հարստությունը»։

Մեկը ոսկի վերցրեց, մյուսը՝ գավաթ, ուրիշը՝ մի բան, չորրորդը՝ այլ, այնպես որ ամբողջը վերցրին։

Այնժամ ձեր կայսրը ուժերը հավաքեց՝ պահելու իր գանձերը։ Իսկ որդին փակվեց դղյակում, Բելտրամի դալ Բորնիոն՝ նրա հետ։ Հայրը պաշարում ձեռնարկեց։

Մի անգամ, երբ որդին անտեսեց վտանգը, նետը մահացու խոցեց նրա ճակատը, որովհետեւ նրան հետապնդում էր չար ճակատագիրը։ Նա մահու մահճին էր, եկան բոլոր ասպետները եւ պահանջեցին իրենց փողերը, որ տվել էին նրան։

Երիտասարդ կայսրը պատասխանեց. «Պարոնայք, անբարի ժամի եք եկել. ձեր գանձերը բաժանված են, հանդերձանքը բաժանված է, իմ իրանը խոցված է ծանրորեն։ Այժմ դուք ինձնից չեք կարող ստանալ հուսալի առհավատյալ»։ Այնուամենայնիվ նա կարգադրեց կանչել նոտարին։ Եվ երբ նա եկավ, սիրալիք ասաց. «Գրի՛ առ, որ ես իմ հոգին հոժարաբար գերի եմ հանձնում»՝ մինչեւ որ նրանց վճարեն»։

Եվ մահացավ։ Նրա մահից հետո պարտատերերը եկան նրա հոր մոտ եւ պահանջեցին փողերը։ Հայրը նրանց խիստ պատասխանեց. «Այդ դո՞ւք եք դրամը փոխ տվել իմ որդուն, եւ նրան հրահրել պատերազմելու իմ դեմ, իսկ այժմ մահվան եւ գույքագրվման ահով հեռացե՛ք իմ տիրույթներից»։

Այնժամ նրանցից մեկն ասաց. «Մեսսեր, մենք տուժած չենք, քանի որ տիրում ենք նրա հոգուն»։ Եվ կայսրը հարցրեց. «Այդ ինչպե՞ս»։ Նրանք ցույց տվին մուրհակը։ Այդտեղ կայսրը խաղաղվեց ու ասաց. «Աստծուն հաճո չէր, որ այդպիսի խիզախ մարդու հոգին գերի տրվի դրամական վարկի դիմաց»։ Եվ հրամայեց վճարել նրանց, որ եւ կատարվեց։ Հետո նրա ձեռքն ընկավ Բելտրամի դալ Բորնիոն, եւ դիմելով նրան՝ կայսրն ասաց. «Ասում էիր, որ աշխարհում բոլորից խելացի ես։ Իսկ այժմ ո՞րն է բանականությունը»։

Բելտրամին պատասխանեց. «Մեսսեր, ես կորցրել եմ այն»։

«Ե՞րբ ես կորցրել»։

«Մեսսեր, ես կորցրի, երբ մահացավ ձեր որդին»։

Այնժամ կայսրը հասկացավ, որ իր որդու արժանիքներով է հպարտանում նա, ներեց նրան եւ շռայլորեն վարձատրեց։

Շարունակելի

Բուսերենից թարգմանեց Արշակ ՄԱՂՈՑԱՆԸ

Երաժշտականության եւ Երիտասարդության Երկրագործ

Շահել գանձ երկնային անելի է թե՛ գամենայն ոսկի երկրական։ Եւ քսակ աճեցնել լիութեամբ է շառաւել սոսկ առ բոցս դժոխքոց, եթե ոչ ծառայի առ ի պետս աստուածային, մինչ իմաստութիւն ամբարեալ բանալի է դրանց երկնից։

Երբայրագիր խրատախօսը, որ իւրովի էր ձեւակերպում յաւերժականի եւ անցողիկի հանգամանքը, անվերապա էր հաւատում իր մատնանշած փրկութեան ուղուն։ Անվերապա էր նաեւ մեր՝ իր յաջորդներիս համոզմունքը, որ այս պահին եւս մեկ քայլ առաջանում ենք առ Լոյսն անմատոյց, որովհետեւ Գարեգին Ա. գիտակրթական կենտրոնը վստահաբար այն դարձնում էր կրթական, ուր առաւել կկենեց

մեր գիտելիքներն ու կարողութիւնը, կկփենք մեր հոգեմտաւոր ամրութիւնը եւ դուրս կգանք նրա քուրայից իմաստութեամբ մաքրագործուած։ Մեր սիրելի բարերար Զրաշ Դիդիգեանի ազգանպաստ ցանկութեամբ, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ եւ կամօքն Աստուծոյ՝ այս նոր տաճարում երկրի վրայ կամբարունեն երկնային գանձերը, եւ անանց Լոյսի եւս մեկ ջախ կբոցավառուի փրկութեան Տապանն ընդունած աշխարհում։ Եւ եթե երանի է լինել մարդ, որ ընտրել է յաւերժի ուղին, ապա որքան երանեալ է ազգը, որ իր ամբողջ ուղին մշտապես զարդարել է գիտութեան լոյսով, շողերով արուեստի եւ ճառագայթներով մշակոյթի։

Գեորգ ՄԱՂՈՑԱՆ



Ն. ԲԵՐԴՅԱՆԷ

Սկիզբը՝ էջ 6

Ստեղծագործության ուղին լատինալեզուության ուղին է, ուղին է կյանքի լույսի իրականացման: Գյուրեղի շատ հաճախ մեքենայով «գորշ է ուզած» տեսություն, եւ հավերժ է կյանքի ծառի կանաչը» խոսքերը կարող են շրջվել այսպես. «Գորշ է ուզած» կյանք, եւ հավերժ կանաչ՝ տեսության ծառը»: Ահա թե ինչ կնշանակի դա: «Տեսությունը» ստեղծագործություն է, Պլատոնի ու Զեգելի եւ, «կյանքը» չի կարող լինել գորշ առօրեականություն, պայքար գոյության համար, ընտանեկան ճղճություն, անհաջողություններ, հիասթափություններ եւ այլն: Այդ իմաստով «ստեղծությունը» կարող է կրել բարոյական վերելքի բնույթ:

Բարոյական գործողությունների ստեղծագործական-անհատական բնույթը

Ստեղծագործական բարոյագիտությունը տարբերվում է օրենքի բարոյագիտությունից եւ նորմերից առաջին հերթին նրանով, որ նրա համար բարոյական խնդիրն անկրկնելի անհատական ստեղծագործական խնդիր է: Չի կարելի լուծել կյանքի բարոյական խնդիրները համապարտադիր նորմերի մեքենայորեն կիրառմամբ: Չի կարելի ասել, որ միշտ ու ամենուր միեւնույն պայմաններում պետք է միանգամայն միանման վարվել: Առաջին հերթին դա չի կարելի ասել արդեն նրա համար, որ երբեք չեն կարող լինել միանգամայն նույն պայմանները: Կարելի է սոսկ արտահայտել առավելագույն ճիշտ հակառակը: Մարդը միշտ պետք է հանդես գա անհատականորեն եւ անհատականորեն էլ լուծի կյանքի բարոյական խնդիրները, պետք է բացա-

ՊԱՐԱԴՈՔՍԱԼ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՔԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

անհատական ստեղծարարությունը: Ազատությունը ստեղծագործական էներգիան է, նորի ստեղծման հնարավորությունը: Այդ ազատությունը չի ճանաչում օրենքի բարոյագիտությունը: Վերջինս ամենեւին չի ճանաչում այն, որ բարին ստեղծվում է, որ յուրաքանչյուր անկրկնելի անհատական բարոյական գործողություն ստեղծվում է նոր բարին, որը աշխարհում դեռ չկար, որը բարոյական գործողություն կատարած հայտնագործություն է: Գոյություն չունի կարծրացած, վիճակագրական բարոյական կանոնակարգ, որը ենթարկված է մեկ համապարտադիր բարոյական օրենքին: Եվ մարդն էլ աշխարհի այդ կարգունակների պահվ կատարողը չէ: Մարդը գյուտարար է ու արարիչ: Մարդու բարոյական խնդրը կյանքի ամեն մի վայրկյանում պետք է կարողանա դրսևորել ստեղծարարություն ու գյուտարարություն: Ստեղծագործական բարոյագիտությունը Եներգետիկական ու դիմամիկական բարոյագիտություն է: Կյանքի հիմքում ընկած է Եներգիան եւ ոչ թե օրենքը: Եվ կարելի է նույնիսկ ասել, որ Եներգիան է ստեղծում օրենքը: Ստեղծագործական Եներգետիկական բարոյագիտությունը միանգամայն այլ կերպ է նայում չարի դեմ պայքարին, քան օրինադրական բարոյագիտությունը: Ստեղծագործական բարոյագիտության համար չարի դեմ պայքարը կատարվում է ոչ այնքան կանխման ու ոչնչացման, որքան ստեղծագործական բարին ստեղծելով եւ չարը ստեղծագործական բարու վերափոխելով միջոցով: Օրենքի բարոյագիտությունը վախճանական բարոյագիտություն է, նրա համար աշխարհը ներփակ կարգ է, որից երբեք չի կարելի դուրս արձնել: Ստեղծագործական բարոյագիտությունն անվախճան բարոյագիտություն է: Նրա համար աշխարհը բաց է եւ ճկուն, բացված են անսահման հորիզոններ, ու հնարավոր է ճեղքելով անցում այլ աշխարհներ: Ստեղծագործական բարոյագիտությունը հաղթահարում է վախճանականի մղձավանջը, կյանքի կացության մղձավանջը, որից հնարավոր չէ փախչել: Եվ ստեղծագործական բարոյագիտությունը փրկաբանական բարոյագիտությունից առավել է: Ստեղծագործական բարոյագիտությունը արժեքների բարոյական կարգի չէ: Ստեղծագործական բարոյականությունը ծագում է անձնավորությունից, սակայն ուղղված է ոչ թե անձնավորությանը, այլ՝ աշխարհին, այն ժամանակ, երբ օրենքի բարոյագիտությունը ծագում է աշխարհից, հասարակությունից եւ ուղղված է անձին: Միայն ստեղծագործական բարոյագիտությունն է առաջինը հաղթահարում հոգու բացասական ուղղվածությունը, առաջին հեր-

թին՝ չարի ու մեղքի դեմ պայքարում, եւ հաստատում հոգու դրական ուղղվածությունը, կյանքի արժեքավոր բովանդակության ստեղծարարությունը: Այն հաղթահարում է ոչ միայն երկրային, այլեւ երկնային տրանսցենդենտալ եասիրությունը, որով վարակված է նույնիսկ փրկաբանական բարոյագիտությունը: Պատժի եւ դժոխքի հավիտենական տանջանքների վախը չի կարող այլեւս որեւէ դեր խաղալ ստեղծագործական բարոյագիտության մեջ: Եվ դրանով իսկ բացահայտվում է մաքուր, անկեղծ բարոյական տարրերը, քանզի ուզածով վախ խեղում է բարոյական զգացումները եւ բարոյական գործողությունը: Կարելի է նույնիսկ ասել, որ բարոյական արժեք չունի այն, ինչը կատարվում է վախից, կարեւոր չէ՝ տանջանքները ժամանակավոր են թե՛ հավիտենական: Ո՛չ պատժի եւ ո՛չ էլ դժոխքի վախը, այլ՝ կյանքում անշահախնդիր ու ներկյալված սերը՝ Աստծո ու աստվածայինի, արդարության ու կատարելության, դրական արժեքների հանդեպ, պետք է համարվի բարոյականի դրական մոտիվը: Սրա վրա է կառուցվում ստեղծագործական բարոյագիտությունը:

Ստեղծագործական բարոյագիտությունը հաստատում է անհատական ու եզակի արժեքը: Եվ դա նոր երեւոյթ է բարոյական աշխարհում: Անհատական եւ անհատականության արժեքը բարոյագիտությունը դժվարությամբ է բացահայտում, եւ միայն 19-րդ դարի գիտակցությունը դա նկատեց: Այստեղ հսկայական դեր խաղացին այնպիսի մարդիկ, ինչպիսիք Ռուստոնսկին էր, Նիցշեն, Խբսենը, Կիրկեհարդը: Եվ քրիստոնեական բարոյագիտությունը երկար ժամանակ չէր հասկանում անհատականի նշանակությունը, նրա բարոյական կյանքը ներկայանում էր համապարտադիր օրենքին եւ թափա: Բարոյագիտության համար անհատական ու եզակին երկակի նշանակություն ունեն: Առաջին հերթին բարոյական գեահատական ու բարոյական գործողությունը պետք է ծագել կոնկրետից, եզակի անհատից եւ անհատական ու անկրկնելի լինել իրենց բարոյական գործողության եւ գեահատական անհատականությանը: Յուրաքանչյուր անհատ մարդ պետք է վարվի բարոյականորեն, ինչպես ինքը, այլ ոչ թե ինչպես ուրիշ մեկը, նրա բարոյական գործողությունը պետք է բխի նրա բարոյական խոցի խորքից: Երկրորդ՝ անհատական ու անհատականությունը պետք է ընդունվեն որպես բարոյական արժեքներ հիերարխիական աստիճանի կողմից: Անհատականությունը, անկրկնելի, եզակի անհատականությունը բարձրագույն արժեք է, այն ընդհանուրի համար ցնծության միջոց չէ, չնայած այդ ընդհանուրը համապարտադիր բարոյական օրենք է եղել: Մինչեւ վերջ լինել անձնավորություն եւ անձը չփոխել, լինել անհատականություն եւ իր կյանքի բոլոր գործողություններում անհատականություն մնալը բարոյական բացարձակ իմպերատիվ է, ինչը ձեռնավորվում է պարադոքսալ կեր-

պով: Սա նշանակում է՝ մնա ինչպես կաս, մի փոխիր քեզ: Պարզվում է՝ ինքնագոհաբերումն ինքն իրեն հավատարիմ մնալն է: Խբսենի Պեր Գյուտը ցանկանում էր լինել ինքնատիպ, նա հաստատում է իր ինդիվիդուալիզմը (անհատապաշտությունը)... Սակայն անհատապաշտությունը միշտ սպանում է անձնավորությանն ու անհատականությանը: Պեր Գյուտը երբեք չէր ավել ինքն իր հետ. նա կորցրեց իր անձը եւ գնաց դեպի ծովան: Միջակայության գոյությունը համաշխարհային գրականության ամենացնցող կերպարներից մեկն է: Ստեղծագործության բարոյագիտությունն ամենեւին անհատապաշտություն չէ: Արդեն անկախ է դարձել անհատապաշտության եւ պերսոնալիզմի տարբերությունը: Ինքն իր հետ լինել նշանակում է իրագործել իր մասին Աստծո ծրագիրը, Աստծո գաղափարը: Այդպիսին է անձնավորության բնույթը՝ որպես բարձրագույն արժեք: Անձնավորությունը հոգեպես է իրագործվում եւ ոչ թե կենսաբանորեն: Բարոյագիտությունը հիմնված է անձնավորության վրա եւ առանց անձնավորության չկա բարոյագիտություն: Մարդկային անձնավորությունը, որպես Աստծո գաղափար, որպես Աստծո պատկեր, բարոյական գիտակցության կենտրոնն է, գերագույն արժեքը: Եվ մարդկային անձնավորությունը գերագույն արժեք է ոչ թե նրա համար, որ նա կրողն է համապարտադիր բարոյական օրենքի, ինչպես Կանտն է համարում, այլ ինչը նրա համար, որ նա Աստծո գաղափարն ու Աստծո պատկերն է, կրողը կյանքի աստվածային անկունքի: Այդ իսկ պատճառով հնարավոր չէ բարոյությամբ նսեմացնել ու ոչնչացնել մարդուն: Մարդկային անձնավորության բարոյական գործողությունն ու ոչ միայն անձնական, այլեւ հասարակական եւ նույնիսկ տիեզերական նշանակություն: Մարդկային անձնավորությունից են բխում աշխարհով մեկ տարածվող բարոյական ճառագայթները: Սակայն մարդկային անձնավորությունը միշտ մնում է աշխարհի իրեն կենտրոնը: Բարոյական կյանքը, որի սուբյեկտը հասարակությունն է, արդեն կյանքի սառնեցում է, բարքերի կյանքը, սովորությունները, հասարակական կարծիքը: Միայն անձնավորությունն է ճշմարիտ ստեղծագործական, մարգարեական սկիզբը բարոյական կյանքում, այն նոր արժեքներ է կոծում: Եվ դրա համար էլ այն խոշտանգվում է: Ստեղծարար անհատը պայքար է մղում հանուն կուսականության, նախաստեղծության, բարոյական խոցի եւ բարոյական մտքերի մաքրության՝ կարծրացած կոլեկտիվ բարոյական խոցի ու մտքի մշտական դիմադրության պայմաններում, ժամանակի ոգու, հասարակական կարծիքի եւ այլն: Այն որ այսպես ստեղծարար անհատականությունը կարող էր իրեն զգալ մեկուսացած, ոչ ինքնահաստատված՝ լինելով հավաքականության մասնիկը, այլ հարց է արդեն: Իր խոցի ազատության միջոցով է անձնավորությունը կապված հավաքականության հոգուն եւ ոչ թե հասարակական հար-



կարման ու հասարակական հեղինակության: Ստեղծագործական բարոյագիտությունը մշտապես մարգարեական է, ապագային վերաբերող բարոյագիտություն, եւ դրա համար էլ այն բխում է անձից եւ ոչ թե սոցիալապես ուղղված կոլեկտիվից:

Քրիստոնեական աշխարհի ներսում հակամարտում են բարոյական երկու ուղղություն՝ հնազանդությունն ու ստեղծարարությունը, անձնական փրկության բարոյականությունն ու կործանումի վախը եւ արժեքների ստեղծագործական բարոյականությունը, իրեն աշխարհի վերակերպումն ու վերափոխմանը նվիրած բարոյականությունը: Եվ հնազանդությունը, եւ ստեղծարարությունը հիմնված են գոհաբերման վրա, սակայն հնազանդության գոհաբերումն ու ստեղծարարության գոհաբերումը տարբեր բնույթներ են կրում: Կարող է պատահել, որ հնազանդության գոհը պատրաստակամ հրաժարվի անձնական ստեղծագործությունից, բայց անընդհատ կմտածի անձնավորության, նրա կատարելագործման մասին. կարող է պատահել, որ գոհը պատրաստակամորեն մոռանա անձնավորության մասին եւ մտածի միայն արժեքների եւ աշխարհի համար կատարված գործերի մասին, սակայն լույս միայն անձնական ստեղծագործական ներշնչանքի հաստատման պարագայում:

Շարունակելի
Թարգմանությունը՝ Ա. Ս. -ի



հայտի ստեղծագործական իր կյանքի բարոյական գործողություն, ոչ մի ակնթարթ չպետք է դառնալ բարոյական ավտոմատ: Կյանքի հարուցած խնդրի առնչությամբ մարդը պետք է կատարի բարոյական գյուտ ու հայտնագործություն: Դրա համար էլ ստեղծագործական բարոյագիտության համար մարդու ազատությունը միանգամայն այլ նշանակություն ունի, քան օրենքի բարոյագիտության համար կա, այսպես կոչված՝ կանխ ազատություն, որը գուրկ է ստեղծագործական բնույթից եւ նշանակում է միայն կա՛մ բարու օրենքի ընդունում եւ կա՛մ դրա մերժում, եւ պատասխանատվությունը դրա արդյունքում կա՛մ ընդունում է, կա՛մ մերժում: Ստեղծագործական բարոյագիտության համար ազատությունը ոչ թե բարու օրենքի ընդունելն է, այլ բարու եւ արժեքի

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստուկյան Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 30.10.2015 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ